# Ազգ
Azg

2 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2011 ՈՒՐԲԱԹ 218(4836)

ISSN: 1829-1651


## ՀՌԱԿ-ն ու Արմենական-ՌԱԿ-ը միավորվում են

*Հուշագիր միասին ճանապարհ դուրս գալու մասին*




**Երեկ տեղի ունեցավ մի իրադարձություն, որ կարող է հայոց ավանդական կուսակցություններից մեկի՝ Ռամկավար ազատական կուսակցության համար նոր հանգրվան նշանակել. երկու կուսակցություն՝ ՀՌԱԿ-ն ու Արմենական-ՌԱԿ-ը, որոշելով վերջ դնել տարիներով ՌԱԿ կառույցներում առկա պառակտմանը, երեկ միավորման հուշագիր ստորագրեցին՝ հայտարարելով միավորման գործընթաց սկսելու մասին: Հուշագիրը ստորագրեցին ՀՌԱԿ հանրապետական վարչության ատենապետ Էդվարդ Անտինյանը եւ Արմենական-ՌԱԿ հանրապետական վարչության ատենապետ Հակոբ Ավետիքյանը, «Արմենիա-Մարիոթ» հյուրանոցի «Թագուհի Փառանձեմ» սրահում: Հուշագրի ստորագրումից առաջ երկու ատենապետները լրագրողների համար բացահայտեցին միավորման շարժառիթներն ու նպատակները. «Հուշագիր ենք ստորագրում՝ սկսելով գործընթաց մեր միավորման ուղղությամբ կամ, եթե կուզեք, եւ ավելի ճիշտ կլինի՝ վերամիավորման ուղղությամբ: Հայաստանում բազմաթիվ կուսակցութունների առատությունից միշտ դժգոհում ենք բոլորս եւ ժողովուրդն արդարացիորեն, շուտով նրանցից առնվազն երկուսը կվերածվեն մեկի», կատակով նշեց Հ. Ավետիքյանը:**

**Պատասխանելով այն հարցին, թե ո՞վ է լինելու միավորված կուսակցության ղեկավարը, Հ. Ավետիքյանը նկատեց, թե այսօր միայն միավորման գործընթացն է սկսվել, այն դեռ ճանապարհ ունի անցնելու. երկու կուսակցությունները համապատասխան հանձնաժողով են ստեղծելու, որը կաշխատի տեխնիկական, նյութական, կազմակերպական հարցերի վրա, նաեւ հետագայում մեկ միավորիչ համագումար կազմակերպելու խնդիրները կհամակարգվեն: Է. Անտինյանը մոդայիկ բառով ասաց, թե ճանապարհային քարտեզը գործընկերների հետ համատեղ են ստեղծելու՝ առայժմ հուշագիր է ստորագրվել, որով ճանապարհ են դուրս եկել: Նա մատնանշեց հուշագրի այն կետը, որով առաջիկայում նոր միավորված կուսակցության քաղաքական կուրսն է ընտրվելու՝ խորհրդարանական ընտրությունների հանդեպ վերաբերմունք եւ գործընկերների ընտրություն, որոնք արվելու են արդեն միասնաբար: Կուսակցության անվան մասով Է. Անտինյանը նշեց, թե անունն, անշուշտ «Ռամկավար-Ազատական» կլինի՝ անձնական ամբիցիաներ չկան, միակ հավակնությունն այն է, որ ավանդական կուսակցություններից մեկը միավորվի. «Ամեն ինչ ավարտված չէ, ոչ մեկը խաղից դուրս չէ: Միասին ենք անելու՝ լինեն Սփյուռքի թե մեր այստեղի գործընկերները: Կլինե՞ն լիբերալ-դեմոկրատական դաշտում այլ կուսակցություններ, որ կցանկանան միավորվել, կգան՝ ամեն ինչ միասին կանենք», ասաց Է. Անտինյանը:**

*Տես էջ 3*

## Սամվել Նիկոյանը՝ ԱԺ նախագահ, Էդուարդ Շարմազանովը՝ փոխնախագահ

Երեկ ուշ երեկոյան տեղի ունեցավ ՀՀԿ խորհրդի նիստ, որը վարում էր կուսակցության նախագահ Սերժ Սարգսյանը: Խորհրդի նիստում քննարկված միակ՝ ԱԺ նախագահի-փոխնախագահի առաջադրման հարցում առանձնապես անակնկալ տեղի չունեցավ. ինչպես որ վերջին շրջանում գրում էր մամուլը, ՀՀԿ խորհրդում միաձայն որոշել են հաջորդ քառօրյայում որպես ԱԺ նախագահի թեկնածու առաջադրել ԱԺ փոխխոսնակ Սամվել Նիկոյանին: Այս դեպքում քանի որ առաջանալու էր ԱԺ փոխխոսնակի թափուր տեղի հարց՝ այս պաշտոնի համար էլ առաջադրվել է ՀՀԿ մամուլի խոսնակ, ՀՀԿ խմբակցության քարտուղար Էդուարդ Շարմազանովի թեկածությունը, ընդ որում՝ սա էլ միաձայն ընդունված թեկնածություն է: Սա էլ վաղուց մամուլը գրել է: Իսկ ահա խմբակցության քարտուղարի ազատված տեղի համար առաջադրվել է Գագիկ Մելիքյանի թեկնածությունը, եւ էլի միաձայն:

Այս բոլորը «**Ազգին**» պատմեց ՀՀԿ դեռեւս խոսնակ Էդուարդ Շարմազանովը, որը սակայն, մեր հարցին պատասխանելով, նշեց, թե չի պատրաստվում հրաժարվել խոսնակի իր դերից, քանի որ օրենսդրական աշխատանքը չէր խանգարում, որ խոսնակի կուսակցական պարտականությունը կատարի (ընդ որում՝ շատ մոբիլ), ինչո՞ւ պետք է ԱԺ փոխխոսնակի պաշտոնը խանգարի նույն պարտականությունները կատարել:

Ուրիշ հարցեր ՀՀԿ խորհրդի նիստում, ինչպես ասացինք, չեն քննարկվել: Լրագրողները մի քանի հարցի պատասխան փորձեցին ստանալ ՀՀԿ խոսնակից: Մեկ օր առաջ Ազգային ժողովի արտահերթ նիստում եղած խառնաշփոթի վերաբերյալ հարցին ի պատասխան Է. Շարմազանովը շատ չկենտրոնացավ՝ աժիոտաժը սովորական երեւույթ է, բայց նաեւ չի արդարացնում եղածը: Որոշ լրատվամիջոցներ նաեւ վերջին օրերին գրում են, թե ՀՀԿ շտաբի պետի պաշտոնի համար հրաժարական տված ԱԺ նախկին նախագահ Հովիկ Աբրահամյանը դառնալու է ԲՀԿ նախընտրական շտաբի պետը: Այս լուրերին Է. Շարմազանովը խորհուրդ տվեց չհավատալ, սուտ են:

Փաստորեն լրագրողները վերջապես իրենք իրենց ազատեցին ամեն օր նույն թեմայով գրելուց, մնաց ԱԺ ղեկավարության բուն ընտրությունն արդեն եկող շաբաթ տեղի ունենալիք այս տարվա վերջին քառօրյային: Բայց էլի մի ինտրիգ մնաց՝ նոր պաշտոնանկություններ, ախր, չեղան…

**Ս. Խ.**

## Եվրոպացի շատ դիվանագետներ հեռանում են Թեհրանից

*Լոնդոնում փակվել է Իրանի դեսպանատունը*

Ֆրանսիան, Գերմանիան եւ Հոլանդիան խորհրդակցության համար Թեհրանից հետ են կանչել իրենց դեսպաններին: Ավելի վաղ Նորվեգիան «ապահովության նկատառումներով» Թեհրանում փակել էր իր դիվանագիտական ներկայացուցչությունը: Չի բացառվում, որ Իտալիան եւս փակի իր դեսպանատունը: Այդ մասին հաղորդում է ՌԻԱ գործակալությունը:

Արեւմուտքի հետ Իրանի առանց այդ էլ լարված դիվանագիտական կապերը սկսեցին խզվել այն բանից հետո, երբ Թեհրանում հարյուրավոր երիտասարդ արմատականներ հարձակվեցին Մեծ Բրիտանիայի դեսպանատան վրա, ջարդուփշուր արեցին հարկաբաժինները, այրեցին բրիտանական դրոշը եւ նույնիսկ կարճ ժամանակով պատանդներ վերցրին: Դրանից հետո Լոնդոնը իրանցի դիվանագետներին 48 ժամ տվեց Մեծ Բրիտանիայից հեռանալու համար եւ Թեհրանից դուրս բերեց իր ամբողջ դիվանագիտական անձնակազմը: Բրիտանացիների օրինակին կարող են հետեւել եվրոպական ուրիշ պետություններ: Բացառված չէ, որ Եվրոմիության արտգործնախարարները իրենց հերթական նիստում հակաիրանական տնտեսական պատժամիջոցների շարքում ընդգրկեն նաեւ իրանական նավթը:

## Վաղվա «Ազգ-Մշակույթ. Հավելվածում»

**Մեթյու Ստեների՝ Արշիլ Գորկուն նվիրված նորընծա «Այծեր տանիքի վրա» գրքից հատվածներ՝ Հակոբ Ծուլիկյանի թարգմանությամբ:**

**Հալեպի «Պետրոս Ադամյան» թատերախմբի 50-ամյա գործունեության արժեւորումը Բախտիար Հովակիմյանի հրապարակմամբ:**

**Անցյալի էջերից. Պատառիկներ Սուրեն Քոչարյանի հուշերից՝ Չարենց-Թումանյան:**

**Բեռլինի Ազատ համալսարանի հայագիտական ամբիոնի վարիչ Ժիրայր Քոչարյանի պարզաբանումները «Ազգին»:**

**Լեւոն Մութաֆյանը՝ Նորայր Ադալյանի արձակի գնահատմամբ գրողի 75-ամյակի առիթով:**

**Մեր անդրադարձը վերջերս Երեւանում լույս տեսած «Ռուբեն Նաֆյան» ալբոմին:**

**Մ. Բ.**

## Կառավարության շենքի գրոհը կասեցվեց

Արդեն ավանդույթ է դարձել, որ ամեն հինգշաբթի՝ կառավարության նիստերի օրը, կառավարության շենքը շրջապատում են մեր այն համաքաղաքացիները, որոնք բողոքում են անօրինական գործողություններից: Երեկ մոտ մի քանի հարյուր բողոքավորներ որոշել էին գրոհել կառավարության շենքը, մտնել նիստերի դահլիճ եւ իրենց բողոքի ձայնը տեղ հասցնել: Գրոհը կանխեցին ոստիկանության աշխատակիցները՝ շենքի աստիճանների մոտ պատ կազմելով եւ բողոքավորների հետ բացատրական աշխատանք տանելով:

Ի վերջո, կառավարության նամակների եւ բողոքների բաժնի պատասխանատու պրն Ղազարյանը հանդիպեց ու լսեց բողոքները, սակայն որեւէ պատասխան չտվեց ու խորհուրդ տվեց դիմել դատարան: Դատարան բառը լսելով բողոքավորներն էլ ավելի բարձր բղավեցին ու վանկարկեցին. «Էդ սուտ դատարաններից, կեղծ վճիռներից, անօրինականություններից հոգնել ենք, հերիք է մեզ խաբեք, մենք պահանջում ենք դատել մեր սեփականությունը խլողներին, այլ ոչ թե կեղծ պատասխաններով անդրադառնալ մեր բողոքներին: Եթե մեկ շաբաթում մեր օրինական պահանջները չկատարվեն, ապա մեր թիվը տասնապատիկ կավելանա, ու ոչ միայն այս շենքը, այլեւ ավելի կարեւոր շենքեր գրոհով կվերցնենք…», բղավում էին հավաքվածները:

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

## Վիլնյուսյան «հնարավորությունն» ու շփման գծի չհետաքննվող միջադեպերը

Միջազգային հանրություն ասվածը բացառիկ մի հատկություն ունի. այնքան անդեմ է, որ ամեն ինչի մասին կարող է խոսել, բայց ոչինչ չանել:

Ղարաբաղա-ադրբեջանական շփման գծում վերջին շրջանում տեղի ունեցած միջադեպերի առնչությամբ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները նոյեմբերի 28-30-ին տարածաշրջան այցելությանը Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահներին կրկին շեշտել են 1994-ի զինադադարի համաձայնագրի պահպանման կարեւորությունը: Այս էլ որերորդ անգամ է շեշտվում այդ միջադեպերի քննության անհրաժեշտությունը, սակայն այդ ուղղությամբ կոնկրետ քայլեր չեն նկատվում:

ԵԱՀԿ ՄԽ-ի համանախագահների հայտարարությամբ, որ տարածվել է նոյեմբերի 30-ի կեսգիշերին մոտ Բաքվից, նշվում է, որ համանախագահներ Ռոբերտ Բրադկեն, Իգոր Պոպովն ու Բեռնար Ֆասիեն հաստատում են շփման գծի երկայնքով տեղի ունեցող միջադեպերի հետաքննության առաջարկված մեխանիզմների ներդրման անհրաժեշտությունը, ինչին երկու նախագահները սկզբունքորեն համաձայնություն են տվել: Լավ է, որ Հայաստանի եւ Ադրբեջանի համաձայնությունը կա, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն էլ քանիցս կողմ է արտահայտվել, սակայն միջադեպեր էլի տեղի են ունենում, իսկ հետաքննություն չի արվում:

Մյուս կողմից, ի՞նչն է միջազգային հանրությանն ու մասնավորապես Մինսկի խումբը փորձելու հետաքննել, երբ շփման գծի հերթական դիտարկումներից շատերի դեպքում ադրբեջանական կողմը դիտորդներին իր առաջին գիծ չի թույլատրում հասնել: Եվ այս պարագայում էլ անդեմ միջազգային հանրությունը ոչինչ չի ասում, չի դատապարտում, կոչ չի անում, որ կոնկրետ հասցեատեր ունենա, այլ բավարարվում է երկու կողմերին արվող հիշեցմամբ, որ հետաքննության մեխանիզմներն անհրաժեշտ են:

Համանախագահներն իրենց հայտարարությամբ նաեւ տեղեկացնում են, որ տարածաշրջանային այցելությանը քննարկել են նաեւ լրացուցիչ այնպիսի միջոցներ, որոնք հնարավոր կդարձնեն մարդկային շփումների մակարդակում «մեծացնել վստահությունը», ինչպես նաեւ ջանքեր գործադրել մշակութային վայրերի, գերեզմանոցների պահպանության ուղղությամբ:

Ինչեւէ, ինչ-որ քայլեր կարելի է ակնկալել դեկտեմբերի 6-7-ին Վիլնյուսում տեղի ունենալիք ԵԱՀԿ-ի Նախարարական խորհրդի հանդիպմանը, որի առնչությամբ համանախագահները կողմերին կոչ են արել «օգտագործել այս հնարավորությունը վերահաստատելու պատրաստակամությունը, գտնել խաղաղ կարգավորում եւ դուրս գալ անընդունելի ստատուս քվոյի շրջանակներից»: Սակայն ակնկալիքները մեկ բան են, իրականությունը՝ այլ, ասել է թե դատելով ադրբեջանական կողմի դիրքորոշման կարծրացումից ու սադրանքներից, որոնց դիմում է հարեւան երկիրը, դժվար թե Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարները կարողանան «օգտագործել» վիլնյուսյան հնարավորությունը:

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ԱԶԳ

## Ընթացիկ

# Արամ Զ. Սարգսյանը` Տեր-Պետրոսյանի հետ տարաձայնությունների եւ ՀՀԿ-ի մասին

«**Ազգը**» գրել էր, որ ԲՀԿ-ին ուղղված ՀԱԿ-ի առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանի վերլուծություն-առաջարկ-սեփական կարծիքը կարող է պառակտում առաջ բերել ՀԱԿ-ում: Կարծես թե այդ սահմանազատվելու առաջին ծիլերը տեսանելի են: «Հանրապետություն» կուսակցության առաջնորդ Արամ Զավենի Սարգսյանը, հարցազրույց տալով «Առաջին լրատվական» կայքին, մի քարք` ՀԱԿ-ի սովորույթներին անհարիր եւ անսովոր բաներ է ասել: ԲՀԿ-ի հետ համագործակցելու առաջարկի մասով, օրինակ, Ա. Զ. Սարգսյանը նշել է. «Միշտ չէ, որ Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ կոնգրեսում ներգրավված կուսակցությունների, քաղաքական գործիչների տեսակետները համընկնում են: Լինում են լուրջ բանավեճեր, տարակարծություններ, բայց վերջիվերջո գալիս ենք ընդհանուր հայտարարի, կոնսենսուսի: Սա այն եզակի դեպքերից էր, որի շուրջը կոնսենսուս չկար: Բայց Տեր-Պետրոսյանը նպատակահարմար գտավ իր մասնավոր տեսակետը ձեւակերպել եւ դա որպես քաղաքական վերլուծություն ներկայացրեց: Մենք մեր մոտեցումները, մեր մտավախությունները Լեւոն Տեր-Պետրոսյանին հայտնել ենք: Ներկա դրությամբ թե՛ հերթական ընտրությունների մասին խոսք բացելը, թե՛ դաշինքները որեւէ կուսակցության հետ` անկախ նրանից, թե որ անհատը կամ կուսակցությունն է ներկայացնելու` դեմ ենք եղել, համարել ենք ժամանակավրեպ: Մենք գտնում ենք, որ կոնգրեսը ունի թե՛ քաղաքական, թե՛ հասարակական աջակցության այն պոտենցիալը, որ միայնակ, իր ուժերով կարող է հասնել փոփոխությունների:



Ես չեմ բացառում նաեւ, որ փոփոխությունների ալիքի վրա մեզ միանա Հանրապետական կուսակցությունը, որտեղ կան նորմալ մարդիկ, որոնք հասկանում են, որ երկրում փոփոխություններ են պետք», ասել է նա. «Մենք` «Հանրապետություն» կուսակցությունը, նպատակահարմար չենք գտնում այսօրվա այն քննարկումները, որոնք տեղի են ունեցել կոնգրեսում, եւ մենք արտահայտվել ենք, բարձրաձայնել ենք մամուլում: Այո՛, մենք ունենք տարաձայնություններ Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ այդ առումով, բայց բազմաթիվ այլ հարցերում մենք ունենք ընդհանրություններ Հայ ազգային կոնգրեսի հետ, եւ գտնում ենք, որ սա այն ուժն է, որն ի զորու է իր շուրջը համախմբել: Առավել եւս` գործընթացները, որ պիտի ծավալի կոնգրեսը, Լեւոն Տեր-Պետրոսյանի նշած ուղղությունների հետ դեռ չեն կապվում: Հիմնական պոտենցիալը դրվում է գարնանը կոնգրեսի ուժը մոբիլիզացնելով` հզոր ալիք նախապատրաստելու վրա: Մենք հակված ենք լծվելու այդ գործին», ասել է Արամ Զ. Սարգսյանը, միեւնույն ժամանակ հայ-ռուսական 49 տարով համաձայնագրին իր անհամաձայնության պարագան նշելով (այդ հարցով եւս ՀԱԿ-ում կոնսենսուս չի եղել)` նկատելով. «Սա մեզ հակադրության մեջ չի դնում` այնպես, ինչպես Տեր-Պետրոսյանի վերջին քաղաքական վերլուծությունը, որը իմ տեսակետին հակառակ է, չեն հակադրվում իրար, որովհետեւ մենք մեկ խնդիր ունենք` երկրին բերել փոփոխություններ: Ով եւ ինչ մոտեցումներով` դրանցից յուրաքանչյուրը գոյության իրավունք ունի: Բայց որ ուժը որքանով նպատակահարմար կհամարի` դա արդեն խնդրի այլ կողմն է: Այսինքն` ի տարբերություն իշխանությունների, կոնգրեսում միշտ եղել է բազմակարծություն, եւ այդ բազմակարծությունը չի խանգարել կոնգրեսին միասնական հանդես գալ: Որոշումները մեկ կեցից չէ, որ ասվել են, իսկ այն ուժերը, որոնց կարելի է արեւմտյան ուղղու ջատագովներ համարել` ասել են իրենց տեսակետները, եւ որեւէ քննադատություն կամ խնդիր դրանք չեն առաջացրել կոնգրեսի ներսում: Իմ կարծիքով` այդ երկու տեսակետների բանավեճերն են, որ հանգեցնում են միջինին: Ցավոք, նման բան իշխանությունների ներսում 2000 թվականից հետո չկա: Գործընթացները, որ տեղի են ունենում ԱԺ-ում, կառավարությունում` հիշեցնում են սովետական տարիները, սովետական քվեարկությունները»:

Մեր կողմից բազմաթիվ օրինակներ կարող ենք բերել, որ այսպիսի տարակարծությունները չեն հանդուրժվել հենց ՀԱԿ-ի ու նրա ղեկավարի կողմից, եւ կարծում ենք` այս անգամ եւս հազիվ թե հանդուրժվեն: Տեսնենք:

Ս. Խ.

# Մեքենաները սահմանը կանցնեն եղանակի բարելավվելուն պես

### *Վերին Լարսի անցակետի մոտ ստեղծված իրավիճակին անդրադարձավ Մանուկ Վարդանյանը*

Ներկայումս Վերին Լարսի մոտ շուրջ 200 բեռնատար մեքենաներ են կուտակվել, որոնցից 85-ը կանգնած են անցակետում, իսկ մնացածը` դեպի Պյատիգորսկ եւ Դոնի Ռոստով տանող ճանապարհին: Կառավարության նիստից հետո այս մասին լրագրողներին հայտնեց տրանսպորտի եւ կապի նախարար **Մանուկ Վարդանյանը**, ավելացնելով, որ առաջին իսկ հնարավորության դեպքում, եղանակների բարելավվելուն պես, անցակետը կբացվի եւ մեքենաները կանցնեն սահմանը: Ներկայումս մեքենաների տեղափոխությունը ռիսկային է:

Մանուկ Վարդանյանը վերստին տեղեկացրեց, որ նման իրավիճակից խուսափելու համար մինչեւ տարեվերջ կստեղծվի հայ-վրացական համատեղ ընկերություն: Ըստ նախարարի` կողմերը պատրաստ են համատեղ աշխատանք սկսելու, եւ Հայաստանի ներկայացուցիչները շուտով կմեկնեն Վրաստան:

Ըստ նախարարի` վարորդներին նախապես տեղյակ են պահել սպասվող եղանակային վատ պայմանների մասին: Այդ մասին, բացի տրանսպորտի եւ կապի նախարարության պաշտոնական կայքից, հաղորդագրություն է տարածել նաեւ բեռնափոխադրում իրականացնող «Ապավեն» ընկերությունը:

Մանուկ Վարդանյանը հերքեց լուրերը, թե որոշ մեքենաների թույլ են տալիս անցնել, նշելով, որ կա ծանրաքաշ մեքենա, որի օգնությամբ մոտ 10 օր առաջ հնարավոր է եղել դուրս բերել միայն այն մեքենաները, որոնք անցել էին վրացական սահմանը:

Ա. Ս.

# Լրամշակված բյուջեն կառավարությունը կներկայացնի խորհրդարան



**Հայաստանի կառավարությունը երեկ հավանություն տվեց իր կողմից 2011 թ. սեպտեմբերի 30-ին ՀՀ Ազգային ժողով ներկայացված 2012-ի պետբյուջեի նախագծի ցուցանիշներում կատարվելիք փոփոխություններին, ԱԺ մշտական հանձնաժողովներում եւ լիագումար նիստում 2012-ի պետբյուջեի նախագծի քննարկման արդյունքներով Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների, պատգամավորական խմբերի, խմբակցությունների եւ անհատ պատգամավորների կողմից Հայաստանի կառավարություն ներկայացված առաջարկությունների եւ եզրակացությունների ամփոփաթերթին: Ֆինանսների նախարարին հանձնարարվեց 2012-ի պետբյուջեի լրամշակված տարբերակն ամփոփաթերթի հետ ներկայացնել կառավարության աշխատակազմ, որը դրանք սահմանված կարգով կներկայացնի ՀՀ Ազգային ժողով (Ազգային ժողովում նախագծի քննարկումը վերսկսելուց առնվազն 24 ժամ առաջ):**

Ա. Ս.

ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ

# Ադրբեջանի ադրբեջանական համայնք` ավելի տրամաբանական, քան ԼՂ «հայ համայնք» ձեւակերպումը

**Քարոզչությունը ղարաբաղյան պատերազմից հետո այն հզոր միջոցն ու զենքն է, որ պայքարի շարունակականության ու դեռեւս հաղթանակի մասին խոսելու վաղ լինելու հանգամանքն է վկայում: Այդ միջոցին առիթ-անառիթ դիմում է Ադրբեջանը, ընդ որում, շատ դեպքերում հանդես գալով հենց նախաձեռնողի դերում` հայկական կողմերին թողնելով արձագանքելու հնարավորությունը միայն:**

**Այդպիսի մի ձեռնարկում էլ «Լեռնային Ղարաբաղի հայ եւ ադրբեջանական համայնքների» հանդիպման առնչությամբ ադրբեջանական նախաձեռնությունն էր, որ, առանց կասկածի, պետք է տապալվեր, բայց ոչ թե տապալվեց, այլ տեղի չունեցավ: Դե իհարկե, այդպիսի հանդիպում տեղի չէր կարող ունենալ, քանի որ չկա «Ղարաբաղի հայկական համայնք», կա ԼՂՀ բնակչություն, որի հետ արդեն համագործակցելու փորձերը պարտադիր չէ, որ հանգեն զրո արդյունքի: Բայց հանդիպման նախաձեռնությունը թմբկահարվեց ու հիմա էլ փորձ է արվում աշխարհին ներկայացնելու, թե համագործակցության համար մեկնված ադրբեջանական ձեռքը մնաց «օդում»:**

**Երեկ Ադրբեջանի նախագահի աշխատակազմի հասարակական-քաղաքական հարցերով բաժնի ղեկավար, առավելապես հակասություններով ադրբեջանական լսարանը լցնող Ալի Հասանովն ասուլիս է տվել, ու, ադրբեջանական մամուլի փոխանցմամբ, հայտարարել, թե «Բաքուն մեծ նշանակություն է տալիս ԼՂ-ի հայկական եւ ադրբեջանական համայնքների հանդիպումներին, անհրաժեշտ համարելով օգտագործել բոլոր քայլերը, որ կնպաստեն ղարաբաղյան հակամարտության լուծմանը»:**

**Առավել գեղեցիկ ձեւակերպված ցանկություն հակամարտող կողմերից մեկի պարագայում մտածելու անհրաժեշտություն էլ չկա, բայց արի ու տես, որ եվրոպացուն ու միջազգային հանրության մյուս դերակատարներին հասանելի չէ, թե հայկական կողմն ինչու է անպատասխան մնում ադրբեջանցիների «բարի կամք» դրսեւորելու պատրաստակամությունը:**

**Հասանովն, իրեն հասու դատողությունների շրջանակներում, Բեռլինի հանդիպմանը հայկական «համայնքի» անմասնակից լինելը բացատրել է, թե «հայկական կողմն իր որոշակի նպատակներին օկուպացիայից հետո հասնելով` որոշ չափով ձգտում է խուսափել բանակցություններից, ձգել ստատուս քվոն»: Եվ սա ասվում է այն պարագայում, երբ այս տարվա գրեթե բոլոր հանդիպումներում խուսափողի միանձնյա դերակատարը եղել է Հասանովի շեֆ Ալիեւ կրտսերը:**

**Ի հակադրություն եւ որպես իրողության փաստում` Գերմանիայում ԼՂՀ ներկայացուցչությունից Panorama.am-ին տեղեկացրել են, որ ադրբեջանական կողմի հետ հանդիպման վերաբերյալ համաձայնություն չի էլ եղել, որ ԼՂՀ իշխանությունները հրաժարվել են հանդիպել Ադրբեջանի իշխանությունների կողմից Բեռլինում նոյեմբերի 28-ին քարոզչական նկատառումներով կազմակերպված «հայ եւ ադրբեջանական համայնքների» հանդիպմանը:**

**Գերմանիայում ԼՂՀ մշտական ներկայացուցչությունը հանդիպման խնդրանքին ի պատասխան նամակում հայտնել է, որ «Լեռնային Ղարաբաղի հայ համայնք» եզրույթը համարժեք է «Գերմանիայի գերմանական համայնք» եզրույթին: Իսկ հայ-ադրբեջանական հանդիպման գործընկեր գերմանացիներին առաջարկվել է «երկխոսության» չեզոք գոտի համարվող Բեռլինում կազմակերպել լսումներ, որտեղ ադրբեջանական կողմը կփորձի հիմնավորել դիպուկահարներին սահմանից հեռացնելուց հրաժարվելու իր որոշումը:**

**«Երկխոսության» կազմակերպիչներն էլ եղել են Բեռլինի ազատ համալսարանի Կասպյան տարածաշրջանի ուսումնասիրության բաժինը, ադրբեջանա-գերմանական համաժողովը, ինչպես նաեւ «Եվրոկովկասիա» կազմակերպությունը: Հատկանշական է, որ վերջինիս ղեկավարներից մեկը Ռամզին Միրզաեւն է: Ասել է թե չկա գերմանական նախաձեռնություն կամ կազմակերպում, այլ զուտ ադրբեջանական` գերմանական ֆոնով:**

**Ամեն դեպքում, մի տեսակ էլի ուշացած ենք արձագանքում նրան, ինչ Ադրբեջանն արդեն շրջապտույտի մեջ է դրել, հայկական կողմն էլ կարող էր ԼՂ «հայ համայնքի» հանդիպում առաջարկել Ադրբեջանի ադրբեջանական համայնքի հետ, թեեւ վերջինս դժվարությամբ կարող է այդ կարգավիճակին հավակնել էթնիկ առումով որպես այդպիսին չդիտարկվելու հիմքով:**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Հերքում

Տեղեկացնում ենք, որ «Ազգ» օրաթերթի դեկտեմբերի 1-ի համարում «Բարի, խելացի, համեստ, ներողամիտ, իսկը` մուտանտ» հոդվածի հեղինակը ոչ թե ՀՊՄՀ կուլտուրայի ֆակուլտետի հեռուստալրագրության բաժնի երկրորդ կուրսի ուսանողուհի Աննա Քոչիանյանն է, այլ Մարի Հովհաննիսյանը, ով երեկ տեղեկացրեց, որ հոդվածը տեղադրվել է իր բլոգում դեռեւս մարտ ամսին: Հայցում ենք Մարի Հովհաննիսյանի եւ ընթերցողների ներողամտությունը:

# Ցավակցություն

Ռուսաստանի հայերի միության եւ Համաշխարհային հայկական կոնգրեսի նախագահ Արա Աբրահամյանը խորապես ցավակցում է Կարեն եւ Սամվել Կարապետյաններին` իրենց սիրելի մայրիկի`

**Ամալյա Կարապետյանի**

մահվան կապակցությամբ:

---

Նույն տխուր առիթով իրենց ցավակցություններն են հայտնում ՌՀՄ-ի եւ ՀՀԿ-ի հայաստանյան մասնաճյուղի աշխատակիցները:

---

«Ազգը» միանում է ցավակցություններին:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
/ հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

# Ռուսաստանի համար մեկ է, թե ով կդառնա Հայաստանի հաջորդ նախագահը

«Առավոտ» օրաթերթի խմբագիր **Արամ Աբրահամյանը** համոզված է՝ Ռուսաստանի վարչապետ Վլադիմիր Պուտինը առաջիկա նախագահական ընտրություններին կհավաքի ձայների 50 տոկոսը: Խմբագրի գնահատմամբ՝ Պուտինի նախագահ ընտրվելը Հայաստանի կյանքում ազդեցություն կունենա, սակայն նա առաջարկում է հաշվի առնել, որ Հայաստանում կա ազդեցիկ ընդդիմություն, եւ նրա գործոնի մասին չպետք է մոռանալ: «Առավոտ» օրաթերթի խմբագրի տեսակետին համաձայն չէ «Կենտրոն» հեռուստաընկերության «Ուրվագիծ» հաղորդման հեղինակ եւ վարող, քաղաքական մեկնաբան **Պետրոս Ղազարյանը**: Նրա գնահատմամբ՝ Պուտինն այսօր չունի նախկին վարկանիշը: Մարդիկ նրան հաճախ սուլոցներով են դիմավորում: Ըստ նրա՝ ռուսներն այսօր չունեն երկընտրանք, որովհետեւ քաղաքական գործիչները նորություն չեն առաջարկում:




Խմբագիրն ու քաղաքական մեկնաբանը վստահ են, որ Ռուսաստանի համար էական նշանակություն չունի, թե Հայաստանում նախագահական հաջորդ ընտրություններում ով կհաղթի: «Պուտինը չի վերցնի ու ասի՝ Արամ, դու եղիր նախագահ, կամ՝ Պետրոս, դու եղիր: Նրանք բոլորովին դեմ չեն լինի, որ Րաֆֆի Հովհաննիսյանը դառնա նախագահ, բայց հետո նրան կստիպեն վարել իրենց ուզած քաղաքականությունը: Ռուսաստանը չունի իր թեկնածուն: Ով կընտրվի, նրա հետ էլ կաշխատեն», եզրակացնում է Աբրահամյանը:

«Ժամանակ» օրաթերթի խմբագիր **Արման Բաբաջանյանի** գնահատմամբ՝ խորհրդարանում այսօր չունենք ռուսամետ ընդգծված խումբ: Առավելապես ունենք արեւմտյան վեկտորի պաշտպաններ: «Որքան էլ տարօրինակ է՝ Հայաստանն այսօր միակ հետխորհրդային երկիրն է, որտեղ ընդդիմադիր մեծամասնությունը ընդգծված ռուսամետ ուղղության կողմնակիցն է: Եվ այն ամենը, ինչ այսօր կատարվում է Հայաստանում, ռուսաստանյան անհերքելի մասնակցությամբ է տեղի ունենում»:

Անդրադառնալով դեկտեմբերի 4-ին Ռուսաստանում կայանալիք խորհրդարանական ընտրություններին՝ «Առավոտ» օրաթերթի խմբագիրը շեշտում է՝ ձայների մեծամասնությամբ կհաղթի «Եդինայա Ռոսիա» կուսակցությունը: Նրա համոզմամբ՝ խորհրդարանական ընտրությունները չեն կարող որեւէ կերպ ազդել Հայաստանի ներքաղաքական կյանքի վրա, որովհետեւ հայ-ռուսական կապերը բազմաթիվ են. Ռուսաստանն իշխող դիրք ունի պետության բազմաթիվ ոլորտներում:

«Ժամանակ» օրաթերթի խմբագրի մեկնաբանությամբ՝ Հայաստանի ներքաղաքական կյանքի ամենամեծ ինտրիգը Գագիկ Ծառուկյանի անձի եւ նրա ղեկավարած կուսակցության շուրջն է: Ըստ Բաբաջանյանի, բոլորն են անհամբերությամբ սպասում, թե երբ է Ծառուկյանը վերադառնալու Դուբայից եւ հայտարարություն կատարելու: Գործընկերոջ վերոնշյալ դիտարկմանը համամիտ չէ Պետրոս Ղազարյանը: Ավելին, նա վրդովվում է, երբ երկրի լրատվական դաշտը բաղկացած է ինտրիգներից, բամբասանքներից եւ խոսք տանել-բերելուց: Նրա համար առավել կարեւոր է, որ պետական յուրաքանչյուր համակարգում բարեփոխումներ կատարվեն, քան խոսեն բամբասանքներից:

Արամ Աբրահամյանն ընդգծում է, որ ներկայիս ներքաղաքական դաշտում քաղաքական միտքը թարմ գաղափարներով չի փայլում: «Ընդդիմությունը շարունակ ասում է, որ օր առաջ իշխանությունը հեռանա, իշխանությունն էլ ասում է, որ իրենք կազմակերպելու են արդար ընտրություններ»:

Հ. Հ.

# Պարզաբանում «Վիվասել-ՄՏՍ»-ից՝ Ռալֆ Յիրիկյանը չի հավակնում ՀՀ նախագահի պաշտոնին

Նոյեմբերի 29-ին CNews լրատվամիջոցը հրապարակել է «ՄՏՍ ընկերությունը Հայաստանի պոտենցիալ նախագահին վարկավորել է 90 միլիոն ամերիկյան դոլար գումարով» վերնագրով հոդված, որով տարածվել է կեղծ տեղեկատվություն՝ հղում կատարելով «շուկայի մասնակիցներին» եւ «մրցակիցներից մեկի ներքին աղբյուրին»:

Հոդվածում, մասնավորապես, նշվում է, իբր թե «Կ-Տելեկոմ» ընկերության («Վիվասել-ՄՏՍ» ապրանքային նշան) գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը 2013թ. Հայաստանում կայանալիք նախագահական ընտրություններին մասնակցելու քաղաքական հավակնություններ ունի, եւ այդ նպատակով «Մոբիլնիե Տելեսիստեմի» ընկերությունը (ՄՏՍ) նրան ֆինանսական աջակցություն է ցուցաբերում: Բացի դրանից՝ հոդվածում նշվում է, թե իբր ընկերության կողմից բարեգործական գործունեության իրականացման համար օգտագործվող միջոցների աղբյուր կարող են հանդիսանալ Լիբանանի հայկական համայնքի հավաքած միջոցները: (Խե՞ղճ լիբանանահայ համայնք-խմբ.:)

Կարելի է միայն ենթադրել, թե ովքեր են կեղծ տեղեկատվությունը տարածող «շուկայի մասնակիցները» եւ «մրցակիցներից մեկի ներքին աղբյուրը» եւ թե հատկապես ինչ նպատակներ են նրանք հետապնդում: Ենթադրյալ մրցակիցների նմանատիպ գործողությունները անպարկեշտ են, անազնիվ եւ միանգամայն անընդունելի:

Անգամ առանց վերոհիշյալ տեղեկատվությունը մանրամասն վերլուծելու՝ հարկ ենք համարում նշել, որ Հայաստանի Հանրապետության սահմանադրության համաձայն, նախագահի թեկնածու կարող է լինել վերջին 10 տարում Հայաստանի քաղաքացիություն ունեցող, հանրապետությունում մշտապես բնակվող եւ ընտրական իրավունք ունեցող ֆիզիկական անձը: Ռալֆ Յիրիկյանը ոչ միայն չունի որեւէ քաղաքական պաշտոնի ընտրվելու կամ նշանակվելու քաղաքական հավակնություն, ինչը նա հստակ հայտարարել է բազմիցս, այլեւ չի համապատասխանում թեկնածու առաջադրվելու համար պահանջվող չափանիշներից եւ ոչ մեկին:

Ինչ վերաբերում է ընկերության սոցիալական գործունեությանը, ապա այն իրականացվում է բացառապես ընկերության միջոցների հաշվին՝ կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հաստատված ծրագրի շրջանակներում: Ընկերությունը հպարտ է Հայաստանում գործարար մտածելակերպի նոր մշակույթի ներդրման եւ կորպորատիվ սոցիալական պատասխանատվության խոշոր ծրագրերի իրականացման առաջամարտիկը լինելու համար: Ցավալի է, որ նման նախաձեռնությունները կարող են դառնալ էժանագին եւ անհարիր շահարկումների առարկա:



# ՀՌԱԿ-ն ու Արմենական-ՌԱԿ-ը միավորվում են

*1-ին էջից*

**Իսկ թե ինչո՞վ է պայմանավորված քաղաքական այս երկու ուժերի միավորումը, Հ. Ավետիքյանը մատնանշեց նախ գաղափարական նույնությունն ու պատմությունը, հիշեցնելով Արմենական-Ռամկավար կուսակցության հիմնադիր համագումարին իր զեկուցումը, որտեղ դեռ երեքուկես տարի առաջ շեշտել էր, թե կուսակցությունը ստեղծվում է, որպեսզի միավորվի. «Մի քիչ պարադոքսալ երեւույթ էր այն ժամանակ թվում, բայց Արմենական-Ռամկավար ազատական կուսակցության դեպքում հիմնադիրները եւ բոլորը՝ գրեթե 90 տոկոսը, Ռամկավար-Ազատական կուսակցության անդամներ են եղել դեռ 90-ական թվականներից, երբ կուսակցությունը Հայաստանում հաստատվեց եւ խորհրդարանում կազմեց-ունեցավ թվով երկրորդ մեծ խմբակցությունը: Ինչ-ինչ հանգամանքների պատճառով կուսակցությունը պառակտվեց, տարակարծություններ եղան: Հիմա, երբ մենք միավորվում ենք, մեր նպատակն է վերջնականապես Հայաստանում վերահաստատել ՌԱԿ-ը՝որպես մեկ եւ միասնական կազմակերպություն, անմիջական համագործակցություն ստեղծելով Սփյուռքի 12-13 գաղութներում գործող ՌԱԿ կառույցների հետ: Սա է մեր նպատակը: Միավորումը նշանակում է ուժ, նշանակում է՝ ուժեղացնում ենք միավորվող կառույցները»:**

**Հարցեր եղան Հարություն Առաքելյանի շուրջը ստեղծված պատմությանը, ընդ որում՝ Հ. Ավետիքյանն այս բոլորին նայեց առավել ընդգրկուն հայացքով՝ որպես նախադեպ Հայաստանին արվող նվիրատվությունները փոշիացնելու կարծիք ամրապնդելու առումով. «Մինչեւ 2003 թվականը ՌԱԿ-ը Հայաստանում ուներ 5 գրասենյակ, կենտրոնական գրասենյակը՝ Երեւանում: Մեկուկես տարի առաջ Վանաձորի գրասենյակի նվիրատու-բարերարը՝ Բաբկեն Մկրյանը, եկավ եւ ուզեց տեսնել իր նվիրած շենքը, քանի որ նրան ասվել էր, որ այն արդեն գոյություն չունի, վաճառվել է: Հետաքննություն կատարեցինք, եւ 5-6 հրապարակում ունեցանք «Ազգում»՝ ռամկավարները պահանջում էին, որ այդ գրասենյակների վաճառման, օտարման, նվիրատվության, նվիրաբերման բոլոր ծալքերը բացվեն: Գործ է հարուցվել, քանի որ այսօր հեշտ բան չէ գրասենյակ ստեղծել այդ տարածքներում: Առավել եւս, որ նույն բարերարին, ով երկքաղաքացի է, այսինքն՝ նաեւ Հայաստանի քաղաքացի, խնդրեցի, որ նյութապես մեզ օգներ, ասաց՝ «այն առաջին օգնությունը, որ տվեցի, դա ի՞նչ եղավ, որ երկրորդ անգամ տամ»: Սա ամբողջ Հայաստանին է վերաբերում, ոչ միայն մեր կուսակցությանը՝ նվիրաբերում են, փոշիանում է, հատկապես Սփյուռքի պարագայում, եւ այդպիսի մտածելակերպը վնասում է ողջ Հայաստանին»:**

**Քրեական գործի շրջանակում քննիչները հանդիպել են եւ Հ. Ավետիքյանին եւ Է. Անտինյանին: Հ. Ավետիքյանը նշեց, որ քննիչները եկել են խմբագրություն եւ հրապարակումների հիմնավորումներ են ուզել, որոնք տրամադրվել են: Իսկ ահա Է. Անտինյանի հետ երկու անգամ են հանդիպել, Անտինյանը նրանց ասելու բան չի ունեցել, քանի որ այդ տարածքները նրա օրոք չեն օտարվել:**

**Ավարտելով երեկվա, կարելի է ասել, շրջադարձային միավորման հայտարարության մասին մեր հրապարակումը, նշենք, որ վերջին շրջանում Հայաստանի քաղաքական դաշտի պառակտումային ֆոնին, սկսված գործընթացը հաջողելու դեպքում կարող է բարեբեր ազդեցություն ունենալ ոչ միայն պառակտված ՌԱԿ-ը միավորված ու գործուն կառույց դարձնելու առումով, այլեւ ընդհանրապես կարող է օրինակելի լինել այլ քաղաքական ուժերի համար: Ի վերջո՝ այս միավորվող կուսակցություններն իրենց հավակնությունները ստորադասել են միավորման գերադաս գաղափարին:**

**Ներկայացնում ենք հանգրվանային նշանակության հուշագիրն ամբողջությամբ՝ սփյուռքում հատկապես միավորման նկատմամբ հետաքրքրությունը նկատի առնելով:**

## *ՀՈՒՇԱԳԻՐ*

## *ՀՌԱԿ եւ Արմենական-ՌԱԿ կուսակցությունների միավորման մասին*

**Արդեն տեւական ժամանակ է, որ Ռամկավար Ազատական կուսակցության գաղափարակիրները պառակտված վիճակում են, ինչն անհանդուրժելի է հայ ժողովրդի քաղաքական պատմության հնագույնավանդական կուսակցության համար: Հետեւաբար ՀՌԱԿ եւ Արմենական-ՌԱԿ կուսակցությունները հանդիսանալով Ռամկավար Ազատական գաղափարախոսության եւ նրա արժեքների կրողները, հայտարարում են, որ.**

**1. սկսում են միավորման գործընթաց, որի նպատակն է ընդմիշտ վերջ տալ տարիներով ձգվող պառակտմանը եւ ստեղծել մեկ միասնական կուսակցություն,**

**2. կազմում են կուսակցությունների միավորման գործընթացի տեխնիկական եւ հարակից խնդիրները կարգավորող ժամանակավոր հանձնախումբ՝ երկու կուսակցությունների ատենապետերի ղեկավարությամբ,**

**3. կոչ են անում ՀՀ-ում բնակվող բոլոր կուսակցական ընկերներին եւ կառույցներին՝ սատարել, նպաստել եւ մաս կազմել այս միավորմանը,**

**4. կարեւորելով ՌԱԿ սփյուռքյան կառույցների դերը կոչ են անում նրանց՝ Հայաստանի օրինակով սկսել վերամիավորման գործընթաց, նաեւ դառնալով հայաստանյան կառույցների միավորման ուղղակի մասնակիցը եւ աջակիցը,**

**5. հրավիրում են նաեւ Հայաստանում գործող լիբերալ-դեմոկրատական գաղափարախոսությունը դավանող կուսակցություններին միանալ այս նախաձեռնությանը:**

**Հաշվի առնելով, որ միավորումը ենթադրում է պարտադիր ընթացակարգ եւ այն կարող է տեւել որոշակի ժամանակահատված, կողմերը պայմանավորվում են մինչեւ դրա ավարտը մշակել միասնական մոտեցում՝ թե՛ քաղաքական կուրսի ընտրության, թե՛ այլ կուսակցությունների հետ գործընկերային հարաբերությունների հաստատման եւ թե՛ առաջիկա ընտրությունների հարցում:**

**Համոզված ենք, որ նախաձեռնության արդյունքում Հայաստանի Հանրապետությունում կստեղծվի իրապես մեկ միասնական եւ ամբողջական Ռամկավար Ազատական կուսակցություն, որը կդառնա 1885-ին Վանում հիմնադրված Արմենական եւ 1921-ին Կ. Պոլսում գաղափարակից կուսակցությունների հենքի վրա միավորված Ռամկավար Ազատական կուսակցության գաղափարախոսության, քաղաքական հավատամքի եւ նրա ավանդույթների շարունակողն ու զարգացնողը ինչպես Մայր Հայրենիքում, այնպես էլ Սփյուռքում:**

## Հակաքարոզչական

# Ո՞վ է Ֆարհադ Բադալբեյլին

*Բաց նամակի փոխարեն*

Բաքվի կոնսերվատորիայի ռեկտոր Ֆարհադ Բադալբեյլին հանդես է եկել ԼՂ-ի «ադրբեջանական համայնքի գործունեությունը խթանելու կոչով»: Ֆորմալ առումով նա «Ադրբեջանական Հանրապետության Լեռնային Ղարաբաղի տեղաշրջանի ադրբեջանական համայնք» հ/մ (հասարակական միավորման) վարչության անդամ է: Թե ե՞րբ, ի՞նչ հանգամանքներում եւ ի՞նչ նպատակով է ստեղծվել այդ հասարակական «միավորումը»՝ բոլորովին էլ մեր խնդիրը չէ, այլ՝ հարեւան երկրի հասարակության. եթե նա գտնում է, որ իրեն պետք է ունենալ նման կառույց, ապա թող բարով վայելի:

Կառույցը «ներկայացնում է ԼՂ-ի «ադրբեջանական համայնքի» շահերը, հանդես գալիս նենք իշխանություններին, Ադրբեջանի «58 շրջաններում, Բաքու եւ Սումգայիթ քաղաքներում»:

Այսպես դատելիս մենք «իսկական ղարաբաղցիների հետ երկխոսության նպատակ» չենք դնում: Միեւնույն է, Բադալբեյլի լինի, թե Էլման Մամեդով՝ ակնհայտ է, որ ԼՂ հարցը ոչ թե «միջհամայնքային» է, այլ գտնվում է Ադրբեջան-Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն համարժեք բանակցությունների հարթությունում: Հակամարտության պատմությունը գիտի նման օրինակներ. դեռեւս 1991 թ. ամռանը Լեռնային Ղարաբաղի ընտրյալ ներկայացուցիչներն ու Ադրբեջանի նախագահ Մութալիբովը պաշտոնապես քննարկել են փակուղուց ելք գտնելու հնարավորությունը: Հետագայում ԼՂՀ Պաշտպանության պետական կոմիտեի նախագահ Ռոբերտ Քոչարյանն է Մոսկվայում բանակցել նախագահ Հեյդար Ալիեւի հետ: Իսկ մարտական գործողությունների փուլում պաշտոնական շփումներն ու անգամ նամակագրությունը կրել են պարբերական բնույթ: Այնպես որ՝ եթե Ադրբեջանի օրվա իշխանություններն իրոք ունեն երկխոսելու ցանկություն, ապա կարող են օգտվել նախորդների փորձից:

Մեզ հուզում է խնդրի զուտ իրավական կողմը: Բանն այն է, որ պաշտոնական Բաքուն, ի տես միջազգային հանրության եւ հատկապես ԵԱՀԿ Մխ համանախագահների, հետեւողականորեն ձգտում է ձեւափոխել բանակցային գործընթացը եւ այն «իջեցնել միջհամայնքային երկխոսության մակարդակի»: Վերացարկվելով իրականությունից, առաջադրենք այսպիսի հարց. «Ինչի՞ շուրջը կարող են «երկխոսել ԼՂ ադրբեջանական եւ հայկական համայնքների» ներկայացուցիչները, գոյություն ունի՞ մի հարց, որ գտնվում է «միջհամայնքային քննարկումների» տիրույթում»:

Դատելով անգամ ըստ «մադրիդյան առաջարկությունների»՝ ոչ, «քննարկումների» այդպիսի առարկա չկա: Ոչ էլ՝ «միջհամայնքային երկխոսության» անհրաժեշտություն: Այս դեպքում ինչո՞ւ է ադրբեջանական կողմը հիվանդագին սեւեռվել «միջհամայնքային երկխոսության գաղափարի իրացմանը»: Ի՞նչ է դա տալիս Իլհամ Ալիեւին: Տեսականորեն՝ միայն «հնարավորություն», որպեսզի պնդվի, թե «հայերը դեմ են համակեցությանը, նրանք ԼՂ-ում ստեղծել են մոնոէթնիկ հանրություն»:

Բայց իմաստ ունի՞ նման ֆոն ստեղծելու համար այդքան ջանք եւ միջոցներ ծախսել, երբ ամեն ինչ ակնհայտորեն պարզ է. Լեռնային Ղարաբաղում հայերի եւ ադրբեջանցիների խաղաղ համակեցության հեռանկարն Ադրբեջանն է իրավաբանորեն անհնար ճանաչել՝ Գերագույն խորհրդի 1991 թ. նոյեմբերի 26-ին ընդունած՝ «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը լուծարելու մասին» օրենքով եւ դրանից բխեցրած՝ «Ղարաբաղի լեռնային մասի ադրբեջանական բնակչության անվտանգությունն ապահովելու միջոցառումների մասին», ի դեմ՝ առայսօր դեռեւս «հույժ գաղտնի» գրիֆի տակ պահվող որոշմամբ:

Իրավական այդ երկու ակտերի 20-ամյակը, միջանկյալ նշենք, վերջերս բավական հախուռն եւ դարձյալ մեծապետական քննարկումներ սադրեց ադրբեջանական մամուլում: Իմաստն այն էր, որ պետական իշխանության բարձրագույն մարմինը «շատ ճիշտ եւ արդարացի որոշումներ է ընդունել»: Նախկինում ԼՂ-ում ապրած ադրբեջանցիների խնդիրն, ահա, այս հարթությունում է գտնվում՝ որ այդ մարդիկ գործիք են դարձել պաշտոնական Բաքվի ձեռքում, ներքաշվել Լեռնային Ղարաբաղի հայ մեծամասնության դեմ պատժիչ գործողություններում, ապա եւ՝ նույն ադրբեջանական իշխանությունների կողմից մատնվել մոռացության կամ ենթարկվել ներքաղաքական պայքարի խարդավանքներից ածանցված բռնությունների: Խոջալուի օրինակը, թերեւս, ամենաբնութագրականն է:

Այս իմաստով, գուցե, անհրաժեշտություն է, որ ԼՂ «ադրբեջանական համայնքը» երկխոսի Ադրբեջանի իշխանությունների հետ, փորձի պարզել իր քաղաքական եւ մարդկային ողբերգության պատճառները: Մասնավորապես՝ թե ինչո՞ւ են իրենք զրկվել Լեռնային Ղարաբաղի պետական եւ հանրային կյանքում դերակատարություն ունենալու իրավունքից: Հակառակն ուղղակի անտրամաբանական է:

Եթե, իհարկե, չվարկածենք, որ Իլհամ Ալիեւը, մատնված լինելով կատարյալ ձախողման, ԼՂ «ադրբեջանական համայնքի» միջոցով ուզում է ասել այն, ինչ «նորին նախագահական մեծությանը պատշաճ չէ»: Սա բոլորովին այլ նրբերանգ է: Այսինքն, չի բացառված, որ «միջհամայնքային երկխոսության հեռանկարը» միջոց է, որպեսզի իշխանությունները ԼՂՀ անկախության ճանաչման «ծանրությունը» փորձեն բարդել նախկինում ԼՂ-ում ապրած ադրբեջանցիների «ընտրյալ ներկայացուցիչների» ուսերին:

Բայց նույնիսկ այս դեպքում Ֆարհադ Բադալբեյլին կամ Բաքվի սլավոնական համալսարանի ռեկտորը ոչ մի անելիք չունեն. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախությունը ճանաչելու, որպես այդ երկրի օրինապաշտ քաղաքացի իրենց բնակության նախկին վայրերը վերադառնալու եւ ԼՂՀ պետական ու հանրային կյանքին մասնակից դառնալու մասին որոշում իրավասու են ընդունել բացառապես այն մարդիկ, որ մինչեւ 1988 թվականն ապրել են Լեռնային Ղարաբաղում:

Բայց մինչ այդ հարկ կլինի, որպեսզի Ադրբեջանի «58 շրջաններում, Բաքու եւ Սումգայիթ քաղաքներում» պատանդ պահվող մարդկանց տրվի ազատորեն ինքնակազմակերպվելու, իրենց ներկայացուցիչներն ընտրելու եւ ԼՂՀ իշխանությունների հետ «հայրենիք վերադառնալու հարցի» զուտ տեխնիկական ու հումանիտար ասպեկտները քննարկելու հնարավորություն:

Մնացածը, այդ թվում՝ դեկտեմբերի 7-8-ին Փարիզում ԼՂ «ադրբեջանական եւ հայկական համայնքների ներկայացուցիչների հանդիպում կազմակերպելու մասին» Ֆարհադ Բադալբեյլիի խոսքերը կամ սեւ զառանցանք են, կամ «վարդագույն» երազանքներ, կամ՝ անհաջող հումոր: Ինչպես էլ որ լինի, դրանց հասցեատերը ԼՂ «ադրբեջանական համայնք» կոչվող վիրտուալ հանրությունն է: Եվ պատասխանի իրավունքը՝ նույնպես նրանը:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Արքայազն Էնդրյուն, «արքայադուստր» Արզուն եւ նրանց հետեւող բրիտանական մամուլը

Հավանաբար երկուստեք «արքայական» արմատներից ելնելով՝ Իլհամ Ալիեւի կրտսեր դուստր Արզուն, որը բնակվում է Լոնդոնում, սերտ՝ գործնական-PR կապեր ունի բրիտանական արքայազն Էնդրյուի հետ: Առիթ ունեցել է գրելու, սակայն հարցն այն է, որ անցած 4 օրերի ընթացքում արքայազն Էնդրյուն «անհետացել էր», համենայն դեպս՝ համաձայն բրիտանական մամուլի: Նույն աղբյուրները տեղեկացնում են, որ անցյալ շաբաթ արքայազնը մեկնել է շրջագայության Մերձավոր Արեւելքի երկրներ, մասնավորապես նրան սպասել են Քաթարում, Արաբական Էմիրություններում, սակայն, ինչպես գրում է «Ենի Մուսաֆաթը», Էնդրյուն «գաղտնի այց» է կազմակերպել Ադրբեջան: Ինչո՞ւ գաղտնի, որովհետեւ բրիտանական մամուլը արդեն տեւական ժամանակ քննադատում է արքայական տան ներկայացուցչին՝ «սերտ հարաբերություններ ունենալու համար մի երկրի հետ, որտեղ բռնատիրական բարքեր են»: Ի վերջո՝ այս ճնշումը բերեց նրան, որ Էնդրյուն հրաժարվեց Բրիտանիայի առեւտրային հետաքրքրությունների գծով հատուկ ներկայացուցչի պաշտոնից, այդուհանդերձ Էնդրյուն շարունակում է «պաշտպանել բրիտանական բիզնեսը արտասահմանում»:

Ադրբեջան կատարած վերջինիս այցի վերաբերյալ աղբյուրները լռում են, պատճառաբանելով, թե «այցը գաղտնի էր»: Միայն արքայազնի անձնական օգնական եւ անվտանգության ծառայության աշխատակիցը հաստատել է, որ Էնդրյուն իրոք Ադրբեջանում էր, հավելելով՝ «որեւէ այլ տեղեկություն տալ չեմ կարող»: «Այլ տեղեկություններ» փորձել է պարզել անգլիական մամուլը, մասնավորապես հայտնի է դարձել, որ արքայազնը Կասպից ծովի ադրբեջանական ափին գոլֆի կենտրոն է բացել: Այս տեղեկությունը հերքում է Բուքինհեմյան պալատը՝ ուշագրավ նկատառումներից ելնելով՝ «արքայական ընտանիքի անդամը չի կարող սերտ հարաբերություններ ունենալ մարդու իրավունքները ոտնահարող երկրի հետ»: Սակայն, պարզվում է, որ Էնդրյուն «բռապետների հետ հատուկ սեր ունի»: Մասնավորապես նույն բրիտանական մամուլը պատմում է արքայազնի սերտ կապերի մասին Աֆղանստանում, «նախկին» Թունիսում եւ այլուր: Մասնավորապես, նախքան թունիսյան հեղափոխությունը Էնդրյուն հանդիպել է այդ երկրի նախագահ Բեն Ալիի հետ:

Բրիտանա-ադրբեջանական հարաբերություններն առհասարակ ուշագրավ քննարկման թեմա են, մասնավորապես հարեւան երկրում ներկա բրիտանական նավթային հսկան ու Բրիտանիայում առկա հզոր ադրբեջանական լոբբին՝ ի դեմս «արքայադուստր» Արզու Ալիեւայի: Հետաքրքրական է, որ մի կողմից Լոնդոնը խորացնում է Բաքվի հետ առավելապես տնտեսական գործակցությունը, մյուս կողմից՝ բրիտանական մամուլը, մեղմ ասած, քննադատում է Ադրբեջանում «ամեն շարժվող բան»:

Այս վերջինը այնքան է հունից հանել Բաքվին, որ «Բակինսկի ռաբոչի» թերթի գլխավոր խմբագիր Ռահման Հաջիեւը 8-էջանոց վերլուծական է գրել՝ թափելով Լոնդոնի վրա պաշտոնական Բաքվի ողջ մաղձը: Ամենեւին չցանկանալով բերել այստեղ վերոհիշյալ հրապարակումը, առանձնացնենք որոշ հասկանշական տարրեր: «Բակինսկի ռաբոչի»-ին «հիշեցնում է» մասնավորապես անգլիական Guardian-ին, որ վերջինս անցած ապրիլին կոչ էր անում Լոնդոնի դաշնակիցներին՝ «ռմբակոծել Մերձավոր Արեւելքի որոշ երկրներ, այդ թվում՝ Բահրեյնը»: Այս համապատկերում Հաջիեւը նկատում է՝ «Նմանատիպ տպավորություն ստանում ենք, երբ կարդում ենք Ադրբեջանի մասին հոդվածներ նույն պարբերականում», թերեւս՝ առանց մեկնաբանությունների:

Այնուհետեւ «Բակինսկի ռաբոչի»-ին «հիշեցնում է» բրիտանական մամուլին՝ բրիտանա-ադրբեջանական տնտեսական գործակցության տեմպերն ու մակարդակը, որը նույնպես բավական հետաքրքրական կարող է լինել: «Միայն 2011-ի հունվար-հոկտեմբեր ամիսների ընթացքում բրիտանական ներդրումները Ադրբեջանում կազմել են 2 մլն 523 հազար դոլար, այս եւ այլ ցուցանիշներով Բրիտանիան մեր ամենամեծ արտաքին ներդրողն է: Մասնավորապես՝ ընդհանուր շուկայում Լոնդոնի ներդրումները կազմում են 44,3 տոկոս, օրինակ՝ ԱՄՆ-ինը կազմում է 14,4 տոկոս, Ճապոնիայինը՝ 9 տոկոս, Նորվեգիայինը՝ 5 տոկոս, Թուրքիայինը՝ 4,1 տոկոս եւ այլն (Հաջիեւի բերած այս ցուցակում Ռուսաստանը առհասարակ բացակայում է-Հ. Ա.): Ինչպես հայտնի է, օրեր առաջ Բրիտանիայի դեսպանը Բաքվում՝ Փիթեր Բեյթմանը հայտարարեց. «Միացյալ Թագավորությունն ու Ադրբեջանը կանգնած են կարեւոր տարվա շեմին»: Տեղին է հիշեցնել նաեւ, որ բրիտանական հսկա BP-ի արտադրամասերից մեկը հենց Ադրբեջանում է: Գաղտնիք չէ, որ BP-ին են պատկանում այնպիսի նախագծեր, ինչպիսին է «Ազերի-Չըրագ-Գյունեշլի» խոշոր նավթաարդյունաբերական տեղամասը, ինչպես նաեւ «Շահդենիզ»-ը, որը բնական գազի ամենախոշոր արտադրամասն է», այս ամենը «հիշեցնելով»՝ Հաջիեւը հռետորական հարց է տալիս. «Մի՞թե որեւէ մեկը ցանկանում է ստվեր նետել այս հեռանկարային համագործակցության եւ վերոհիշյալ նախագծերի վրա»:

Այս թեմայով նկատենք մի հետաքրքրական իրադարձություն եւս. Թեհրանում բրիտանական դեսպանատան անկումից հետո Լոնդոնի շահերը Իրանում կպաշտպանի Բաքվում գործող բրիտանական դեսպանատունը: Ինչ վերաբերում է Հաջիեւի՝ «ստվեր նետողներին», ապա դրա «փոքրիկ՝ սպորտային նախադեպը» արդեն իսկ կա. Լոնդոնի «Արսենալ» ֆուտբոլային թիմի նախկին հայտնի պաշտպան Թոնի Ադամսը, որը գլխավորում էր ադրբեջանական «Գաբալա» ֆուտբոլային ակումբը, «ընտանեկան պատճառներով» լքել է հարեւան երկիրը: Չնայած այս պատճառաբանությանը, ադրբեջանական մամուլը նկատում է, որ Ադամսի «Գաբալա»-ն ընթացիկ առաջնությունում առաջատարին զիջում է 11 միավորով ու ընթանում է «ընդամենը» 6-րդ տեղում: Հուսանք՝ բոլոր բրիտանացիները չեն հետեւի Ադամսի օրինակին, քանի որ նրանց ներկայությունը հարեւան երկիրը չի դարձնի մեզ համար թշնամի երկիր: Դե իսկ «Բակինսկի ռաբոչի»-ի թերթի գլխավոր խմբագրին, ինչպես նաեւ նրան այս հոդվածը գրել պատվիրող «Բաքվի աշխատավորներին» հիշեցնենք հայտնի ասույթը. «Անգլիացիները հարգում են ձեր դիրքորոշումը, սակայն նրանց ամենեւին չեն հետաքրքրում ձեր զգացմունքները»:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

ԱԶԳ

# Միջազգային

# «Թուրքիայի վարչապետը հազիվ թե ի զորու լինի բացել գլխավոր շտաբի արխիվները»

*Եզրակացնում է Թաներ Աքչամը*

Նոյեմբերի 23-ին 1937-38 թթ. Դերսիմի կոտորածների համար վարչապետ Էրդողանը պետության անունից ներողություն էր խնդրել դերսիմցիներից, պահանջելով, որ այդպես վարվի նաեւ այդ թվերին երկրում միանձնյա իշխելու պատճառով կոտորածների պատասխանատվությունն անմիջականորեն իր վրա կրող Ժողովրդա-հանրապետական կուսակցությունը:

«**Ազգի**» նախորդ համարում, անդրադառնալով այս հարցին, նշել էինք, որ կոտորածի համար պետության ներողությունը իրավագիտական ընթացակարգ է պահանջում, իսկ Էրդողանն ընդամենը բանավոր ներողություն է խնդրել: Բայց եւ այնպես նա դրանով նախադրյալներ է ստեղծել, որ Դերսիմի կոտորածների հետ երկրում աշխուժորեն վերարծարծվեն այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են կոտորածներին Քեմալ Աթաթուրքի մասնակցությունը, սեփական պատմության հետ Թուրքիայի առերեսման անհրաժեշտությունն ու թուրքական արխիվների բացումը:

Ի դեպ, եթե 1915-ի իրադարձությունների այսպես կոչված անաչառ ուսումնասիրության համար Թուրքիայի ղեկավարները արխիվները բացելու պահանջ են ներկայացնում Հայաստանին, Ժողովրդա-հանրապետական կուսակցությունն էլ Էրդողանի կառավարությունից է պահանջում բացել թուրքական արխիվները, որպեսզի հնարավոր լինի ուսումնասիրության միջոցով բացահայտել ճշմարտությունը Դերսիմում:

Այսինքն, երբ Թուրքիայում իրողության հետ առերեսման խնդիր է ծագում, թուրք պետական գործիչներն ու քաղաքական շրջանակները հարցից խուսափելու համար կառչում են արխիվներից: Տվյալ պարագայում խոսքը Ժողովրդա-հանրապետական կուսակցության մասին է, որն ունի նաեւ Դերսիմի կոտորածներին Աթաթուրքի մասնակցությունը արխիվներից կառչելու միջոցով քողարկելու խնդիր:

Ակամա հարց է ծագում՝ ո՞րն է կուսակցության արխիվները բացելու պահանջի առնչությունն այս պահանջը որպես քողարկման միջոց օգտագործելու հետ: Նոյեմբերի 29-ին BIA լրատվական գործակալության տված հարցազրույցում այդ հարցին պատասխանել է Թաներ Աքչամը, ընդգծելով, որ Թուրքիայի արտգործնախարարության եւ թուրքական զինված ուժերի գլխավոր շտաբի արխիվներն առ այսօր փակ են, վարչապետ Էրդողանը հազիվ թե ի վիճակի լինի բացել դրանք:

Ի պատասխան թղթակցի հարցին, Աքչամն ասում է, որ «արխիվները բացել» արտահայտությունը կարող է միանգամայն խաբուսիկ լինել, վարչապետարանին առընթեր գործող, օսմանյան եւ հանրապետական շրջաններին վերաբերող արխիվներն արդեն բաց են: Ցանկացողը կգնա եւ կվերցնի այն փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են:

Այնուհետեւ նա ավելացնում է. «Այստեղ որեւէ խնդիր չկա: Խնդիրը արխիվներում պահպանվող փաստաթղթերի դասակարգումն է: Ոչ բոլոր փաստաթղթերն են տրամադրվում ուսումնասիրողներին: Այլ կերպ, եթե վարչապետարանին առընթեր գործող արխիվներում պահպանված, բայց ընթերցողին չտրամադրված վավերագրերն առ այսօր չեն ոչնչացվել, ապա դրանք պետք է դասակարգել եւ օգտագործման ներկայացնել: Օրինակ, Հայոց ցեղասպանության շրջանում «տիրազուրկ կալվածքների» մասին վիլայեթներից ուղարկված ամենշաբաթյա զեկուցագրերին առնչվող թղթածրարները մինչեւ հիմա քողարկվում են: Առ այսօր փակ է նաեւ արտգործնախարարության արխիվը, ինչը 21-րդ դարում կատարյալ ամոթ է: Իմ կարծիքով, Ահմեդ Դավութօղլուն պետք է վերջ տա այս ամոթին: Մի կողմից տարածաշրջանին եւ աշխարհին արդարության դասեր ես տալիս, իսկ մյուս՝ փակի տակ ես պահում քո նախարարության արխիվները... Տեսականորեն բաց, սակայն պրակտիկորեն փակ են զինված ուժերի գլխավոր շտաբի արխիվները: Մինչդեռ արխիվների մեջ կարեւորագույնը հենց դրանք են: Սակայն, չեմ կարծում, որ վարչապետն ի զորու լինի բացել գլխավոր շտաբի արխիվները: Իմ խորին համոզմամբ, այս արխիվներում պահպանվող վավերագրերը երբեւէ չեն տրամադրվի ուսումնասիրողներին: Հավանաբար Դերսիմի կոտորածներին առնչվող փաստաթղթերը չեն ոչնչացվել, որովհետեւ պետությունն այս հարցում չափազանց ինքնավստահ էր: Ինչ վերաբերում էր Հայկական հարցին, ապա 1918-ից, ինչպես նաեւ 1980-ից հետո արխիվները մաքրազարդել են եւ ոչնչացրել հարցին առնչվող կարեւորագույն վավերագրերը: Դա մենք գիտենք: Մնացած փաստաթղթերը կարելի է, վարչապետի կարգադրությամբ, հրապարակել: Թեեւ մինչեւ օրս հրապարակումներ կատարվել են, սակայն դրանցում ընդգրկված բոլոր վավերագրերը, ցավոք, քարոզչական նպատակի են ծառայում: Պետք է վերջ տալ այս ամենին»:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

# Պակիստանում սպանված թալիբները թուրք գրոհայիններ են

*ՆԱՏՕ-ն ոչնչացրել է թալիբների թուրքական ջոկատին*

Նոյեմբերի 26-ին Պակիստանի սահմանակետերից մեկի վրա ՆԱՏՕ-ի օդուժի հարձակման հետեւանքով սպանվել է 25 զինծառայող: Մինչ ՆԱՏՕ-ն պաշտպանում էր, թե հարձակումը թյուրիմացության հետեւանք է եւ ներողություն էր խնդրում, Պակիստանի զինվորական իշխանությունները դա անվանեցին «ագրեսիայի կանխամտածված քայլ»: Իսկ Իսլամաբադը միջոցներ ձեռնարկեց ինչպես ՆԱՏՕ-ի, այնպես էլ ԱՄՆ-ի դեմ, մասնավորապես Վաշինգտոնից պահանջելով ազատել այն ավիաբազան, որը գործածվում է «Ալ Ղաիդայի» եւ «Թալիբանի» դեմ:

«Թյուրիմացությունները» նորություն չեն ո՛չ ՆԱՏՕ-ի, ո՛չ էլ ԱՄՆ-ի համար: ՆԱՏՕ-ն Աֆղանստանում նույնիսկ հարսանյաց հանդեսն է ռմբակոծել, իսկ ամերիկյան զինվորները Բաղդադի փողոցներում «թյուրիմացաբար» անցորդներին բազմիցս գցել են զրահամեքենաների տակ: Պարզապես դրանք վերջին շրջանում հաճախակի են կրկնվում Պակիստանի սահմանների երկայնքով:

Այդպիսի հարձակում Պակիստանի աֆղանական սահմանին հարող Բաբեր Գհարի շրջանում ԱՄՆ-ի օդուժին պատկանող անօդաչու 5 ինքնաթիռներով իրականացվել է նոյեմբերի 16-ին: Ամերիկյան կողմը հայտարարել էր, որ հարձակումը ձեռնարկվել է «Թալիբանի» հենակետի վրա եւ սպանվել է 18 գրոհային: Սակայն հետագայում պարզվել է, որ այդ գրոհայինները թուրք են, ուստի եւ, ինչպես երեկ նշեց թուրքական հանրային հեռուստատեսությունը, ԱՄՆ-ն հանդես է եկել նոր հայտարարությամբ, մասնանշելով, որ հարձակման ընթացքում իսպառ ոչնչացվեց Պակիստանի թալիբների «թուրքական ջոկատը»: Ընդ որում, տեղեկատվության մեջ մեկ առ մեկ նշվում են թալիբներին ծառայող սպանված թուրքերի անունները:

Հ. Չ.

## ՄՈՍԿՎԱ

# «Քրիստոնյաներն աշխարհում ամենից շատ հալածվող համայնքն են»



Աշխարհում քրիստոնյաներն առավել շատ հալածվող կրոնական համայնքն են. ներկայումս հալածանքների են ենթարկվում մոտ 100 միլիոն քրիստոնյաներ, որ կազմում է ըստ կրոնական պատկանելության հալածվող բոլոր անձանց 75 տոկոսը: Դավանանքի ազատության հարցերի շուրջը երեկ Մոսկվայում կազմակերպված կոնֆերանսում այս տվյալներն է բերել Մոսկվայի պատրիարքարանի արտաքին եկեղեցական կապերի բաժնի նախագահ, Վոլոկոլամսկի միտրոպոլիտ Իլարիոնը:

«Անհեռատեսություն եւ հանցագործություն է անտեսել ու չնկատել քրիստոնյաների հալածանքները, որոնք հետզհետե առավել սպառնալի ձեւեր ու չափեր են ընդունում: Մենք ապրում ենք քրիստոնյաների հալածանքների նոր դարաշրջան, որը որոշ փորձագետներ համեմատում են մ. թ. 1-3-րդ դարերի հռոմեական կայսրերի ժամանակների հալածանքների հետ», ասել է միտրոպոլիտը: Նրա կարծիքով, բարեկեցիկ երկրների բնակիչները ոչինչ չգիտեն կամ չեն ուզում իմանալ այդ խնդրի մասին եւ «պատկանում են լուռ մեծամասնությանը»:

Միտրոպոլիտ Իլարիոնի տվյալներով, հանուն հավատքի աշխարհում 5 րոպեն մեկ քրիստոնյա է մահանում, տարեկան՝ 105 հազար քրիստոնյա: Այդ մասին հաղորդում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը:

Միտրոպոլիտն անհրաժեշտ է համարում ստեղծել տեղեկատվական կառույցներ, «որոնք կզբաղվեն կրոնական ատելության հողի վրա կատարվող հանցագործությունների վերահսկողությամբ»: «Քրիստոնյաների ճնշման ու հետապնդման յուրաքանչյուր դեպք պետք է դառնա ինչպես ազգային, այնպես էլ միջազգային դատական մարմինների քննության առարկա», գտնում է Իլարիոնը:

Նա նաեւ առաջարկել է միջազգային համատեղ կոնֆերանսներ անցկացնել տվյալ խնդիրներով զբաղվող քրիստոնեական իրավապաշտպան կազմակերպությունների փորձի ու տեղեկատվության փոխանակման նպատակով:

# Նոր մեղադրանք Թունիսի նախկին նախագահին



**Թունիսի զինվորական դատարանը երկրի տապալված նախագահ Զին էլ Աբեդին Բեն Ալիին եւ նրան մերձավոր ութ բարձրաստիճան պաշտոնյաների մեղավոր է ճանաչել կտտանքների կիրառման մեջ: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:**

**Մեղադրյալների թվում են նախկին ներքին գործնախարար Աբդալլահ Կալլելը եւ անվտանգության նախկին նախարար Մոհամմեդ Ալի Գանզուին: Նրանցից յուրաքանչյուրը դատապարտվել է 4 տարվա բանտարկության:**

**Ինքը՝ Բեն Ալին դատապարտվել է 5 տարվա ազատազրկման: Այս դատավճիռը վերաբերում է միայն խոշտանգումների գործին: Պետության նախկին ղեկավարը ավելի վաղ 35, ապա եւս 16 տարվա բանտարկության էր դատապարտվել պետական ունեցվածքի հափշտակման եւ կաշառակերության համար:**

**9 մեղադրյալներից 5-ը, այդ թվում՝ Բեն Ալին, դատապարտվել են հեռակա կարգով: 2011-ի հունվարյան պետական հեղաշրջման ժամանակ նախկին նախագահը մերձավոր ազգականների հետ փախել էր Սաուդյան Արաբիա:**

# 32 տոննա մարիխուանա ԱՄՆ-Մեքսիկա սահմանում

**ԱՄՆ թմրանյութերի դեմ պայքարի վարչությունը բացահայտել է Մեքսիկայից ԱՄՆ թմրադեղերի մատակարարման խոշորագույն ուղին: Դա Մեքսիկան ԱՄՆ-ին միացնող գաղտնի թունելն է Կալիֆոռնիայում: 6 մարդ ձերբակալվել է:**

**Ասոշիեյթեդ պրես գործակալությունը հաղորդում է, որ թմրադեղերը գտել են այն բանից հետո, երբ նոյեմբերի 29-ին ԱՄՆ-Մեքսիկա սահմանին հայտնաբերվեց ավելի քան կեսկիլոմետրանոց գաղտնի գետնուղի: Դրանով թմրանյութեր տեղափոխելիս օգտագործվում էին էլեկտրական վագոններ եւ ջրաբաշխական ամբարձիչ: Գետնուղին ուներ էլեկտրական լուսավորություն եւ օդափոխման համակարգ: Կալիֆոռնիայի Սան Դիեգո քաղաքի պահեստներից մեկում գտել են 17 տոննա մարիխուանա, Լոս Անջելեսի բեռնատարներից մեկում՝ ավելի քան 11 տոննա, սահմանի մեքսիկական կողմում՝ եւս 4 տոննա: Սա թունելի բացահայտման շնորհիվ ԱՄՆ-ում հայտնաբերված թմրանյութերի ամենախոշոր քանակությունն է (32 տոննա): Ավելի վաղ՝ նոյեմբերի կեսերին սահմանի նույն հատվածում հայտնաբերվել էր մեկ ուրիշ գետնուղի: Այնտեղ գտել էին 15 տոննա մարիխուանա:**

# «Մանկական Եվրոտեսիլ»-ին ընդառաջ




«Մանկական Եվրոտեսիլ»-ի նախաշեմին «**Ազգ**» օրաթերթը զրուցեց Մոլդովայի, Բուլղարիայի, Հայաստանի եւ Լիտվայի ներկայացուցիչների հետ: Չորս մասնակիցներն էլ ունեն նույն նախասիրությունները՝ շատ են սիրում երաժշտություն, պարել, զվարճանալ ընկերների հետ եւ իրենց կյանքը չեն պատկերացնում առանց դրանց, այդ մասին է Մոլդովայի ներկայացուցչի՝ **Լերիկայի** երգը, որն անկեղծանալով, ասաց. «Երգում խոստովանում եմ, որ ես շատ եմ սիրում պարել, զվարճանալ ընկերներիս հետ, եւ առանց երգի չեմ կարող ապրել եւ երգը հենց իմ մասին է»: Անդրադառնալով Բուլղարիայի մասնակցին՝ **Իվան Իվանովին**, նշենք, որ նա սիրում է խաղեր, եւ իր երգը գրել է վիդեո խաղերի ազդեցության տակ. «Ես շատ եմ սիրում վիդեոխաղեր, որոնց շնորհիվ էլ գրեցի երգս (երգը կոչվում է «Superhero» - Մ.Հ.)»: Հավելենք, որ «**Ազգի**» զրուցակիցներից միայն Իվան Իվանովը անկեղծացավ եւ ասաց, որ նրան ամենաշատը դուր է եկել իր երգը, իսկ Լիտվայի մասնակցուհին՝ **Պաուլինան** ասաց, որ երգերը նորից կլսի եւ մրցույթի ավարտից հետո կբարձրաձայնի, թե որ երկրի երգն է ամենալավը: Այն հարցին, թե ի՞նչ է տալիս «Մանկական Եվրոտեսիլ»-ի մասնակիցներին, Բուլղարիայի ներկայացուցիչ Իվան Իվանովը պատասխանեց՝ ուժ, իսկ Լիտվայի մասնակից Պաուլինիան՝ մեծ փորձ եւ հնարավորություն բացահայտելու ինքս ինձ, մինչ Մոլդովայի ներկայացուցիչ Լերիկան հավելեց. «Առաջին հերթին փորձառություն, երկրորդը՝ հուզականություն, որը քեզ օգնում է աճել եւ նոր ընկերներ ձեռք բերել»:

Մասնակիցներն ասացին, որ հետագայում ցանկանում են մասնակցել նաեւ «Եվրոտեսիլ» երգի մրցույթին, իսկ Լերիկան նշեց նաեւ, որ դրա համար անհրաժեշտ է աճել եւ շատ աշխատել:

Հայաստանը դուր է եկել բոլոր մասնակիցներին, որոնք ջերմ խոսքեր ասացին մեր երկրի մասին, իսկ Պաուլինան առանձնացրեց իրեն շատ դուր եկած վայրերը. «Եղել եմ Հայաստանի տարբեր գեղատեսիլ վայրերում, այցելել եմ Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, Ժամանակակից արվեստի թանգարան, Գեղարդ, որտեղ հանդիպել եմ հայ քահանայի, որն էլ օրհնել է ինձ»: Հավելենք, որ վերջին շաբաթվա ընթացքում պատվիրակությունները բացի սահմանված օրակարգից, ամեն օր մասնակցում են հատուկ եվրոտեսիլյան ճաշ-երեկոների:



Մեր մասնակցի՝ **Դալիթայի** տրամադրությունը շատ բարձր է եւ մարտական, չնայած ինչպես նշեց, շատ է հուզվում. «Ցանկանում եմ լավ ելույթ ունենալ եւ ուրախ կլինեմ, որ այս տարի եւս Հայաստանը հաղթի»:

Սեպտեմբերի 17-ին «Մանկական Եվրոտեսիլ 2011»-ի հայաստանյան ընտրության ժամանակ Դալիթան «Բարի գալուստ Հայաստան» երգով դարձավ առաջատար:

Հավելենք, որ Լիտվայի 10-ամյա մասնակից Պաուլինան երգում է 5 տարեկանից, նվագում է ֆլեյտա, դաշնամուր: Նրա նպատակն է դառնալ արհեստավարժ երգչուհի: Հաղթել է մի շարք երաժշտական նախագծերում եւ փառատոներում: Առաջին տեղ է գրավել միջազգային այնպիսի մրցույթներում, ինչպիսիք են «Baltic Transit» եւ «Baltic Talants»-ին: Պաուլինան շատ է սիրում լսել Քրիստինա Ագիլերա եւ Էլիզա Դուլիթլ:

Բուլղարիայի ներկայացուցիչ Իվան Իվանովը 11 տարեկան է: Նա 6 տարեկանից ընդգրկվել է Բուլղարիայի տեղական մանկական երգչախմբում, մեկ տարի անց դարձել մենակատար, իսկ այժմ «New Music» խմբի անդամ է: Ավելի քան 3 տասնյակից ավելի ազգային եւ միջազգային մրցույթների դափնեկիր է: Երազում է դուետով հանդես գալ Ադամ Լամբերտի հետ: Նշանաբանն է Superhero:

Մոլդովայի ներկայացուցչի իրական անունը **Վալերի Ինգալչեւա** է, բայց նա հանդես է գալիս կեղծանունով՝ Լերիկա: Մասնակցել է տարբեր մանկապատանեկան երաժշտական փառատոների: Այս տարի առաջին անգամ ներկայացնում է Մոլդովան Եվրոտեսիլում:

Հայաստանը ներկայացնող 11-ամյա մասնակիցը՝ Դալիթա Ավանեսյանը սովորել է Ալեքսանդր Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցում, երեք տարբեր ուղղություններով՝ դաշնամուր, կիթառ եւ վոկալ: Նա հեղինակել է վեց երգ: Մասնակցել է մի շարք մրցույթների, որտեղ գրավել է առաջին տեղ: Այժմ հաճախում է Արտաշես Ալեքսանյանի թատրոն-ստուդիան:

**ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

ԱՆԴՐԱԴԱՐՁ

# Լոռիս Ճգնավորյան. «Գրում են միայն ուրիշների պատմածը, առանց իմ կարծիքը հարցնելու»

«Պատվեր ստացա սիմֆոնիա գրելու, որոշեցի ստեղծագործել իմ Թեհրանի տանը: Այստեղ հանգիստ եմ, մարդիկ ջերմ են, միջավայրը՝ հարազատ», ինձ հասցեագրած նամակում նոյեմբերին տեղեկացրել էր **Լոռիս Ճգնավորյանը**՝ նկատի առնելով, որ իր հետ մեր՝ Գլենդեյլից ամռանը կայացած ծավալուն հարցազրույցը տպագրության շեմին է:

Այն, որ մաեստրոն Թեհրանում է, նոյեմբերի 21-ին գրել էր նաեւ մեր պաշտոնակից «Առավոտը», ոչ այնքան ճիշտ շարադրանքով: Մասնավորապես՝ Լոռիս Ճգնավորյանը ոչ թե Գլենդեյլի ֆիլհարմոնիկի, այլ սիմֆոնիկի հետ էր եռամյա պայմանագիր կնքել: Ամռանը վերը հիշատակված մեր հարցազրույցում, որը կարելի է կարդալ «**Ազգի**» առաջիկա դեկտեմբերի 17-ի շաբաթօրյա հավելվածում, մաեստրոն ասել էր. «Ամերիկայում նվագախմբերին պետությունը չի հովանավորում: Հոգաբարձություն կա՝ դիրիժորի գլխավորությամբ, դրամ են հավաքում, որ կարողանան համերգաշար անել: Գլենդեյլի նվագախումբն ինձ հրավիրել է, բայց բյուջեի խնդիր ունեն, ես էլ հակված չեմ մարդկանցից փող հավաքել (ըստ ամերիկյան սովորության դիրիժորը գնում է հարուստների, կորպորացիաների տերերի, գործարարների մոտ, պաղատում, որ օգնեն), էս տարիքիս մարդկանց հետ խոսել, խնդրելուց հոգնել եմ, արդեն 11 տարի Հայաստանի ֆիլհարմոնիկը պահելու համար գործ արել եմ, հիմա իմ կյանքն արժեւորում եմ գրելով՝ պատվերներ ունեմ, օպերա եմ գրում»: «Ոչ մեկի հետ չեմ շփվում: Ապրում եմ նկարելով, հուշեր եմ գրում», ասել էր Ճգնավորյանը մեր հարցազրույցում, հայերը չեն էլ հետաքրքրվում՝ ո՞ղջ եմ, մեռա՞ծ եմ: Պարսիկներն ավելի շատ են հետաքրքրվում: Զանգ են տալիս հաճախ»:

Այն, որ 2012-ից ստեղծագործական կյանքը դարձյալ հայրենիքի հետ է կապելու՝ ցմահ, ինչպես գրել էր «Առավոտի» աշխատակիցը, մեզ տարօրինակ թվաց, որովհետեւ մեր ծավալուն զրույցի մեջ դրա ակնարկն էլ չկար, ընդհակառակը: «Որտեղի՞ց այդ ինֆորմացիան, որտեղի՞ց են եզրակացնում, թե պիտի գնամ Հայաստանում ապրեմ, երբ ինձ հետ կապ էլ չեն ուզում ստեղծել: Ինձ նույնիսկ ԱՄՆ-ում անցկացված անկախության 20-ամյա տոնին չէին հրավիրել», նոյեմբերի 25-ին Թեհրանից հեռախոսով ի պատասխան մեր հարցման ասաց մաեստրոն: Ծանո՞թ է այդ հրապարակմանը, ներկայացվածը ճշմարի՞տ է: Տեղյակ չէր, բայց զարմացած էր, որ իր մասին գրում են միայն ուրիշների պատմածը, առանց իր խոսքն էլ զուգահեռ ներկայացնելու:

«Ճշմարտությունն էն աշխարհում է, որ պիտի գնանք», հեռախոսային մեր զրույցի ժամանակ ասաց Լոռիս Ճգնավորյանը: Ճի՞շտ է, որ Մելիք Մավիսակալյանն է գործիքավորել իր ստեղծագործությունները: «60-ամյակիս էստրադային ոճով ստեղծագործություններ գրեցի, 75 գործի մեջ 1-2 ստեղծագործություն, եւ քանի որ Մավիսակալյանը էստրադային երաժշտության վարպետ է, նրան խնդրեցի: Իսկ բալետներս, օպերաներս, մյուս գործերը հո ուրիշնե՞րը չեն արել»:

Կոնստանտին Օրբելյան կրտսերի՝ հորեղբոր վրեժը լուծելու պատմության մասին իր վերաբերմունքն այսպես արտահայտեց: «Ես բոլորի հանդեպ հարգանք ունե՞մ, ի վերջո թե՛ Օրբելյանը, թե՛ մյուսները հայրենիքին են ծառայել, անձնական խնդիր չի եղել, պարզապես Ֆիլհարմոնիան բոլորին նույն բեմն էր հատկացրել, իսկ Հայաստանի ֆիլհարմոնիկը օրական 5-6 ժամ փորձ էր անում, այլապես ամեն շաբաթ համերգ չէր կարող տալ: Եթե Օրբելյանն է լինելու Գլենդեյլի սիմֆոնիկի ղեկավարը, շնորհավորում եմ», ասաց Լոռիս Ճգնավորյանը: «Ինչ վերաբերում է նույն հոդվածին, շատ հետաքրքրական է, տպագրում են այն լուսանկարս, որում Ավստրիայի նախագահի՝ ինձ 50-ամյա գործունեությանս առթիվ պարգեւած Ոսկե մեդալն է՝ առանց դրա մասին գրելու:

«Իսկ Հայաստանի ֆիլհարմոնիկն առաջին երկու տարին իմ գրպանի փողերով եմ պահել: Թե ի՞նչ են գրում, առանց իմ կարծիքը հարցնելու ի՞նչ ենթադրություններ են անում, էական չէ, ընդհանրապես ինձ համար կարեւոր է, թե ապագայում ինչ կմտածեն իմ մասին»:

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**
**Գերմանիա**

# Համերգ նվիրված Ջուզեպպե Վերդիի մահվան 110-րդ տարելիցին

Այսօր Առնո Բաբաջանյան համերգասրահում կկայանա Ջ. Վերդիի մահվան 110-րդ տարելիցին նվիրված համերգ, որի ընթացքում կհնչեն Վերդիի, Պուչչինիի, Արրիգո Բոյտոյի, Ռոսսինիի, Բելլինիի, Լիստի ստեղծագործությունները: Համերգին կմասնակցեն Վարդուհի Խաչատրյանը (մեցցո սոպրանո) եւ դաշնակահար Հայկ Մելիքյանը (Շվեյցարիա): «**Ազգը**» զրուցեց Շվեյցարիայում 2011-ի ամռանը հիմնադրված «Ավետիս» հայ-շվեյցարական ասոցիացիայի նախագահ, երգչուհի **Վարդուհի Խաչատրյանի** եւ կոմպոզիտոր **Հայկ Մելիքյանի** հետ:

Վարդուհի Խաչատրյանն իր գեղեցիկ ու մաքուր ձայնով այս տարի ելույթ ունեցավ Երեւանում «Վերադարձի դասական երաժշտության փառատոնի» ընթացքում ու հիացրեց երաժշտասերներին իր հրաշալի տեխնիկայով եւ բեմական կեցվածքով: Վարդուհին մեծանալով նկարիչների ընտանիքում՝ յոթ տարեկանից սկսել է նվագել դաշնամուր, իսկ հետո զբաղվել է վոկալով: Երգչուհին իր պրոֆեսիոնալ կարիերան սկսել է 1999-ից Եվրոպայում, երբ Լիեժի (Բելգիա) վոկալ միջազգային մրցույթում նրան շնորհվեց 1-ին մրցանակը: Դրան հաջորդող երկու տարիների ընթացքում նա դարձավ եւս հեղինակավոր վեց միջազգային մրցույթների դափնեկիր: 2004-ին ՀԹԳՄ-ն Վարդուհի Խաչատրյանին որպես տարվա լավագույն օպերային դերասանուհի, շնորհեց «Արտավազդ» ազգային մրցանակը: Վ. Խաչատրյանի անունն ու նրա օպերային կատարումները տարածվել են ու հնչել աշխարհի շատ բեմահարթակներում: Հայ մշակույթի տարածմանն ու պահպանմանն է միտված Շվեյցարիայում նրա կողմից հիմնված «Ավետիս» հայ-շվեյցարական մշակութային ասոցիացիան: Այդ կազմակերպությունում իր լուման ու ներդրումն ունի նաեւ դաշնակահար, կոմպոզիտոր Հայկ Մելիքյանը: Երկու երիտասարդ երաժիշտները միասին հոկտեմբերի 15-ին Ժնեւում հանդես են եկել մեծ համերգային ծրագրով, որը նվիրված է եղել ասոցիացիայի պաշտոնական բացման արարողությանը:



Հայկ Մելիքյանի դերը կարեւոր է նաեւ կոմպոզիցիայի բնագավառում: Նա հեղինակ է բազմաթիվ կամերային-գործիքային, վոկալ, ինչպես նաեւ սիմֆոնիկ եւ երգչախմբային ստեղծագործությունների: Հ. Մելիքյանի իմպրովիզացիայի բացառիկ տաղանդը նրա մենահամերգներին հաղորդում է արտասովոր զգացողություն: Նա արժանացել է մրցանակների ոչ միայն Հայաստանում, այլեւ՝ արտերկրում: Թողարկել է 20-րդ դարի եւ ժամանակակից երաժշտության չորս ձայնասկավառակ, որոնցից վերջինը նվիրված է հայ երաժշտությանը՝ ընդգրկելով Կոմիտասի, Տիգրանյանի, Խաչատրյանի, Բաբաջանյանի, Միրզոյանի, Չթչյանի եւ Մելիքյանի ստեղծագործությունները: Այդ ձայնասկավառակի շնորհանդեսը երեկ կայացավ Երեւանի ջազ-ակումբում:

Հայ-շվեյցարական «Ավետիս» մշակութային ասոցիացիան նախաձեռնել է «1900+» համաշխարհային դաշնամուրային երաժշտության համերգաշարը եւ Շվեյցարիայում Հայաստանի դեսպանության հետ հայտարարել են կոմպոզիտորների նոր ստեղծագործությունների հայտերի ընդունում: 2012-ին անցկացվող մրցույթի խորագիրն է «Ave Maria-2012» եւ անցկացվելու է երկու անվանակարգերում՝ հատուկ ստեղծագործություն ձայնի եւ դաշնամուրի համար, մենանվագ դաշնամուրի համար: «Ave Maria» համերգաշարը նվիրվում է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին եւ ներկայացվող ստեղծագործությունները պետք է լինեն նոր գործեր, չհնչած որեւէ բեմում: Մանրամասներին կարելի է ծանոթանալ info@avetis-swiss.com կայքէջից:

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

# Դեւիդ Հեյը վերադառնում է ռինգ Կլիչկոյին հաղթելու մտադրությամբ

Բրիտանացի գերծանրքաշային պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ Դեւիդ Հեյը, որը հայտարարել է ռինգից հեռանալու որոշման մասին, պատրաստ է շարունակել ելույթները, որպեսզի հաջորդ տարվա մարտին մենամարտի գերծանրքաշային կարգում WBC-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն Վիտալի Կլիչկոյի հետ: Ընդ որում նա պատրաստ է ֆինանսական հարցերում զիջումների գնալ, որպեսզի առաջիկա մենամարտն անպայման կայանա: Նա խոստովանել է, որ արժանի չէ նախատեսված հոնորարի ուղիղ կեսը պահանջելու, ինչպես դա եղել էր հուլիսին Կլիչկոյի հետ կայացած մենամարտում:



Դեւիդ Հեյի մենեջեր Ադամ Բուտը հաստատել է, որ արդեն ստացել են Կլիչկոյի հետ մենամարտ կազմակերպելու պայմանագիրը եւ սկսել են դրա կետերի ուսումնասիրությունը: Նախատեսվում է մենամարտն անցկացնել 2012-ի մարտի 3-ին Գերմանիայի Դյուսելդորֆ քաղաքում:

Եվ այսպես, բռնցքամարտի սիրահարները եւս մեկ հնարավորություն կունենան հետեւելու Կլիչկոյի եւ Հեյի մենամարտին: Հեյը հայտարարել է, որ Կլիչկո եղբայրները միակն են, որոնց հետ մենամարտելու համար արժե կրկին ռինգ դուրս գալ:

Դեւիդ Հեյը 2008-ին տեղափոխվեց գերծանրքաշային կարգ: Մինչ այդ նա 2 նշանակալից հաղթանակ էր տոնել: 2007-ին Դեւիդ Հեյը նվաճեց առաջին ծանրքաշային կարգում WBC-ի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսը՝ նոկաուտի ենթարկելով ֆրանսիացի Ժան Մարկ Մորմեկին: Իսկ 2008-ին Հեյը տեխնիկական նոկաուտով հաղթեց իր հայրենակից Էնցո Մակարինելիին՝ նվաճելով WBO-ի վարկածով չեմպիոնական գոտին: Այդպիսով, նա միավորեց WBA-ի, WBC-ի եւ WBO-ի չեմպիոնական գոտիներն առաջին ծանրքաշային կարգում ու տեղափոխվեց գերծանրքաշային կարգ:

2008-ի նոյեմբերին արդեն քաշային նոր կարգում Դեւիդ Հեյը Լոնդոնում նոկաուտի ենթարկեց ամերիկացի Մոնտե Բարետին: Իսկ մեկ տարի անց, երբ Հեյը հաղթեց Նիկոլայ Վալուեւին, բոլորը սկսեցին խոսել բրիտանացի բռնցքամարտիկի մասին, նշելով, որ նա կարող է ձեռնոց նետել Կլիչկոներին ու վերջ դնել եղբայրների գերիշխանությանը գերծանրքաշային կարգում:

2010-ին Ջոն Ռուիսի եւ Օդլի Հարիսոնի հետ մենամարտում հաջողությամբ պաշտպանելով WBA-ի վարկածով աշխարհի չեմպիոնի իր տիտղոսը, Հեյը սկսեց նախապատրաստվել Վլադիմիր Կլիչկոյի հետ մենամարտին, որում պետք է միանգամից վիճարկվեր չորս գոտի IBF-ի, WBA-ի, WBO-ի եւ IBO-ի վարկածներով:

Դեւիդ Հեյը բավական ինքնավստահ էր իրեն պահում մենամարտից առաջ անցկացված մամուլի ասուլիսներում: Դրանցից մեկին նա ներկայացել էր մի մարզաշապիկով, որի վրա պատկերված էին Կլիչկոները գլխատված:

Սակայն Համբուրգում կայացած մենամարտում մրցավարները միահամուռ որոշմամբ հաղթանակը շնորհեցին Վլադիմիր Կլիչկոյին: Մենամարտից հետո Հեյը հայտարարել էր, որ ոտքի մատներից մեկը կոտրվել էր, որի պատճառով ստիպված էր ռինգում զգույշ գործել: Նա նաեւ խոստացել էր Կլիչկոյին նոկաուտի ենթարկել, եթե կրկին մրցի նրա հետ: Իսկ հետո, հոկտեմբերին, իր ծննդյան 31-ամյակի օրը Հեյը հայտարարեց բռնցքամարտից հրաժեշտ տալու մասին: Եվ ահա նա վերադառնում է ռինգ Կլիչկոյի նկատմամբ ռեւանշի հասնելու վճռականությամբ:

# «Մետալիստը» եվրոգավաթներում ուկրաինական ֆուտբոլի առաջատարն է դարձել



Ֆուտբոլի Եվրոպայի լիգայի խմբային մրցաշարի 6 խմբերում կայացան 5-րդ տուրի հանդիպումները: Ժամկետից շուտ հաջորդ փուլի ուղեգրերն ապահովեցին ՊԱՕԿ-ը, «Ստանդարտը», «Հաննովերը», «Էյնդհովենը», «Լեգիան», Խարկովի «Մետալիստը», «Բրագան» եւ «Ատլետիկոն»:

«Մետալիստը» եվրոգավաթներում դարձել է ուկրաինական ֆուտբոլի առաջատարը: Թիմը վստահ է հանդես գալիս մրցաշարում՝ 5 հանդիպումներում մնալով անպարտելի: Ժամկետից շուտ հաջորդ փուլի ուղեգիր նվաճելու համար «Մետալիստին» «Ավստրիայի» հետ մրցախաղում բավարարում էր նույնիսկ ոչ-ոքին: Սակայն «Մետալիստը» սեփական հարկի տակ ջախջախեց մրցակցին (4-1): Խարկովցիները 13 միավորով վստահորեն գլխավորում են G խմբի աղյուսակը: 2-րդ տեղում 7 միավորով հոլանդական «Ալկմարն» է, որը հյուրընկալվելիս ոչ-ոքի (0-0) խաղաց շվեդական «Մալմյոյի» հետ:

A խմբում կայացավ կենտրոնական հանդիպումներից մեկը: Հունական ՊԱՕԿ-ը մրցակցի դաշտում 2-1 հաշվով պարտության մատնելով անգլիական «Տոտենհեմին», վաստակեց 11 միավոր ու լուծեց ուղեգրի հարցը: 2-րդ ուղեգրին հավակնում է Կազանի «Ռուբինը», որը սեփական հարկի տակ 4-1 հաշվով առավելության հասնելով անգլիական «Շեմրոկ Ռովերսի» նկատմամբ, 10 միավորով ընթանում է 2-րդ տեղում: 7 միավորով 3-րդ տեղում է «Տոտենհեմը»:

B խմբում հանգուցալուծումը տեղի ունեցավ: 2 ուղեգրերին տիրեցին «Ստանդարտն» ու «Հաննովերը»: Նրանց միջեւ Բելգիայում կայացած մրցավեճն ավարտվեց դաշտի տերերի՝ «Ստանդարտի» 2-0 հաշվով հաղթանակով: «Վորսկլա»-«Կոպենհագեն» խաղն ավարտվեց ոչ-ոքի՝ 1-1:

C խմբում եւս ժամկետից շուտ հայտնի դարձան ուղեգրերի տերերը: «Էյնդհովենը» մրցակցի դաշտում 3-0 հաշվով պարտության մատնելով «Լեգիային», C խմբում 13 միավորով գրավեց 1-ին տեղը: Չնայած պարտությանը, «Լեգիան» էլ կշարունակի պայքարը: Թիմն ունի 9 միավոր: Դրան նպաստեց Բուխարեստի «Ռապիդի» պարտությունը Թել Ավիվի «Հապոելից»՝ 1-3:

H խմբում «Բրագան» 1-0 հաշվով հաղթելով «Բիրմինգհեմին», ապահովեց ուղեգիրը: «Բրյուգեի» ֆուտբոլիստները հյուրընկալվելիս 4-3 հաշվով պարտության մատնեցին Սլովենիայի «Մարիբորին»:

I խմբում Մադրիդի «Ատլետիկոն» հյուրընկալվելիս 1-0 հաշվով հաղթեց շոտլանդական «Սելթիկին» ու 10 միավորով գլխավորեց աղյուսակը՝ նվաճելով 1-ին ուղեգիրը: 2-րդին հավակնող «Ուդինեզեն» գոլազուրկ ոչ-ոքի խաղաց ֆրանսիական «Ռենի» հետ:

# Գյուլբուդաղյանցը կշարունակի աշխատել «Իմպուլսում»

Ինչպես տեղեկացանք «Իմպուլսի» մամուլի քարտուղարությունից, ակումբի ղեկավարությունը 5 տարով երկարաձգել է պայմանագիրը թիմի մարզչական կազմի՝ գլխավոր մարզիչ Արմեն Գյուլբուդաղյանցի, նրա օգնականներ Արա Նիգոյանի, Ստեփան Դեմիրճյանի հետ: Նույն սկզբունքով պայմանագրերը երկարաձգվել են նաեւ «Իմպուլս-2-ի» գլխավոր մարզիչ Արմեն Սանամյանի եւ նրա օգնական Սամվել Պողոսյանի հետ:

Մեկ տարով պայմանագիրը երկարաձգվել է «Իմպուլսի» ավագ, բրազիլացի պաշտպան Ջուլիանո Հիմենեսի հետ: Իսկ թիմի առաջատար Զավեն Բադոյանը ներկայումս փորձաշրջան է անցնում Բելառուսի չեմպիոն ԲԱՏԷ-ում, որի հետ մեկնել է Բարսելոն:

# «Միլանը» հետաքրքրվում է Տեւեսով

Իտալական «Միլանը» պատրաստվում է «Մանչեսթր Սիթիի» խաղացող Կառլոս Տեւեսի համար 25 մլն ֆունտ ստեռլինգ առաջարկել: Առայժմ կողմերը բանակցում են: «Միլանը» ցանկանում է ֆուտբոլիստին վարձավճարով թիմ ընդունել: Իտալիայում Տեւեսը պետք է խորը հետազոտության ենթարկվի:

## ՃԱԽՄԱՏ

# Արոնյանը կմասնակցի Լոնդոնի մրցաշարին

Վաղը Լոնդոնում մեկնարկում է շախմատի արդեն ավանդական դարձած 3-րդ մրցաշարը 9 ուժեղագույն շախմատիստների մասնակցությամբ: Մասնակիցների թվում է Լեւոն Արոնյանը, որն իր վարկանիշով (2802) 3-րդն է Մագնուս Կառլսենից (2826) եւ Վիշվանաթան Անանդից (2811) հետո: Մասնակիցների թվում են նաեւ Վլադիմիր Կրամնիկը (2800), Հիկարու Նակամուրան (2758), Մայքլ Ադամսը (2734), Նայջլ Շորթը (2698), Լյուկ Մակշեյնը (2671) եւ Դեւիդ Հաուելը (2633):

Այս մրցաշարում հաղթանակի համար տրվում է 3 միավոր, ոչ-ոքին գնահատվում է 1 միավոր: Մեկնարկային տուրում Արոնյանը սպիտակներով կխաղա Մակշեյնի հետ: Տեղի կունենան նաեւ Կրամնիկ-Նակամուրա, Կառլսեն-Հաուել, Ադամս-Անանդ պարտիաները:

Մրցաշարը բավականին ուժեղ կազմ ունի: Բավական է նշել, որ մասնակիցներից 5-ը ՖԻԴԵ-ի դասակարգման ցուցակի լավագույն տասնյակում են:

# Պետրոսյանը լրացուցիչ գործակիցներով զիջեց հաղթողին

Հնդկաստանում ավարտվեց շախմատի միջազգային մրցաշարը, որում Հայաստանը ներկայացնում էին Տիգրան Պետրոսյանն ու Զավեն Անդրեասյանը: Մեր երկու շախմատիստներն էլ հաջող հանդես եկան: Պետրոսյանը 11 հնարավորից վաստակեց 8,5 միավոր եւ միայն լրացուցիչ գործակիցներով զբաղեցրեց 3-րդ տեղը՝ իրենից առաջ թողնելով նույնպիսի արդյունքի հասած հնդիկ Աբհիջեթ Գուպտային եւ ռուսաստանցի Եվգենի Գլեյզերովին: Զավեն Անդրեասյանը 8 միավորով գրավեց 6-րդ տեղը:

Ավարտական 2 տուրերում Պետրոսյանը ոչ-ոքի խաղաց իսլանդացի Հենրիկ Դանիելսենի հետ ու հաղթեց հնդիկ Աբհիջեթ Գուպտային՝ զրկելով նրան միանձնյա հաղթող դառնալու հնարավորությունից: Իսկ Անդրեասյանը 2 պարտիաներում էլ հաջողություն կնքեց Եվգենի Գլեյզերովի եւ Սահաջ Գրովերի հետ:

# Միխիթարյանն առաջատար եռյակում է

Բրազիլիայի շախմատի մրցաշարի 7-րդ տուրում Գրիգոր-Սեւակ Միխիթարյանը սպիտակներով ոչ-ոքի խաղաց Ռաֆայել Լեյտաոյի հետ եւ 4 միավորով 3-րդ տեղում է: Միանձնյա առաջատարը Սանդրո Մարեկոն է, որը սեւերով հաղթելով Լուիս Կոելյոյին, վաստակեց 5 միավոր: Նրան կես միավոր է զիջում Ժիլբերտո Միլոշը, որը ոչ-ոքի խաղաց Էվանդրո Բարբոսայի հետ: 8-րդ տուրում Միխիթարյանը սպիտակներով կխաղա Լուիս Կոելյոյի հետ:

# Տաթեւ Աբրահամյանն առայժմ 7-րդն է

ԱՄՆ-ի Սենտ Լուիս քաղաքում մեկնարկած շախմատի շրջանաձեւ մրցաշարի 10 մասնակիցների թվում է գրոսմայստեր Տաթեւ Աբրահամյանը: Անցկացված 3 տուրից հետո Տաթեւը 1,5 միավորով զբաղեցնում է 7-րդ հորիզոնականը:

Նա Գրեգորի Շահադեից կրած պարտությամբ սկսեց մրցաշարը: 2-րդ տուրում Տաթեւը հաղթեց ֆիլիպինցի Անգելո Յունգին, իսկ հաջորդ մրցախաղում հաշտություն կնքեց Մարկ Առնոլդի հետ: 4-րդ տուրում Աբրահամյանը սեւերով կխաղա Իրինա Կրուշի հետ:

3 տուրից հետո 100 տոկոսանոց արդյունքով առաջատարը բրազիլացի Անդրե Դիամանտն է: Նրան կես միավոր է զիջում վրացի Գեորգի Կաչեյշվիլին: 2-ական միավորով հաջորդ տեղերում են թուրքմեն Մեսգեն Ամանովը եւ ամերիկացի Մարկ Առնոլդը:

# Ռոնալդոն գլխավորեց 2014-ի աշխարհի առաջնության կազմկոմիտեն



Բրազիլացի հանրահայտ ֆուտբոլիստ Ռոնալդոն կգլխավորի 2014-ի ֆուտբոլի աշխարհի առաջնության կազմկոմիտեն: Այդ պաշտոնը նախկինում զբաղեցնող Բրազիլիայի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Ռիկարդո Տեյշեյրան մեղադրվում էր կոռուպցիայի մեջ, որի պատճառով հրաժարական էր տվել: Բրազիլացիները նախընտրեցին Ռոնալդոյին, որը երեկվանից անցել է իր պարտականությունների կատարմանը:

Այս նշանակումը ողջունել են նաեւ Ռոնալդոյի նախկին խաղընկերները: Օրինակ Կաֆուն հույս է հայտնել, որ թեեւ Ռոնալդոն ադմինիստրատիվ աշխատանքի փորձ չունի, սակայն բնավորությամբ ուժեղ անձնավորություն է եւ կարող է հիանալի կատարել իրեն վստահված պատասխանատու գործը:

Հարկ է նշել, որ ՖԻՖԱ-ն այնքան էլ գոհ չէ Բրազիլիայում ընթացող աշխարհի առաջնության նախապատրաստական աշխատանքներից: Փորձագետներից ոմանք նույնիսկ չեն բացառում, որ աշխարհի առաջնության անցկացման իրավունքը տրվի այլ երկրի:

# Աճուրդ «Զենիթի» մասնակցությամբ

Սանկտ Պետերբուրգի «Զենիթի» գլխավոր մարզիչ Լուչանո Սպալետտին եւ թիմի խաղացողներ Վյաչեսլավ Մալոֆեեւն ու Վլադիմիր Բիստրովը քաղաքի ռեստորաններից մեկում մասնակցել են բարեգործական աճուրդի:

Լուչանո Սպալետտիի 2 բաճկոնները վաճառվեցին 425 հազար ռուբլով: Իսկ Մալոֆեեւի ձեռնոցների եւ Բիստրովի խաղակոշիկների համար 100 հազար ռուբլի վճարվեց:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

ԱԶԳ

Օրվա հետքերով

# Հոկտեմբերին անշարժ գույքի գներն անփոփոխ են

## *Իսկ գործարքների քանակը հիմնականում նվազել է*

Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ շուկայի վերլուծության տվյալների համաձայն, 2011-ի հոկտեմբերին, Հայաստանի անշարժ գույքի շուկայում իրականացվել է 15934 գործարք, ինչը 4,2 տոկոսով բարձր է նախորդ ամսվա՝ սեպտեմբերի համեմատ եւ 3,3 տոկոսով՝ 2010-ի հոկտեմբերի գործարքների քանակի համեմատ: Միայն օտարման գործարքների քանակը հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ նվազել է 5 տոկոսով, իսկ անցյալ տարվա հոկտեմբերի համեմատ աճել՝ 7,1 տոկոսով: 4190 օտարման գործարքներից առուվաճառքը կազմել է 77,5 տոկոսը: Մնացածը նվիրատվություններն ու փոխանակություններն են: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 37,9 տոկոսն արձանագրվել է Երեւան քաղաքում:

Մայրաքաղաքում առուվաճառքի գործարքների 63,5 տոկոսն արձանագրվել է բազմաբնակարան շենքերի բնակարանների նկատմամբ: 2011-ի սեպտեմբերի համեմատ, հոկտեմբերին բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը Երեւանում նվազել է 8,1 տոկոսով, իսկ նախորդ տարվա հոկտեմբերի համեմատ աճել՝ 7,5 տոկոսով:

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|
| | հոկտեմբեր 2011թ. | հոկտեմբեր 2010թ. | սեպտեմբեր 2011թ. |
| Կենտրոն | 479700 | 455000 | 452100 |
| Արաբկիր | 395700 | 368000 | 363500 |
| Քանաքեռ-Զեյթուն | 295100 | 276000 | 275600 |
| Նորք-Մարաշ | 281800 | 300300 | 295200 |
| Ավան | 252300 | 257200 | 253800 |
| Էրեբունի | 254700 | 233000 | 238400 |
| Շենգավիթ | 258300 | 243500 | 237000 |
| Դավթաշեն | 284800 | 265000 | 268400 |
| Աջափնյակ | 248400 | 238000 | 236000 |
| Մալաթիա-Սեբաստիա | 249700 | 233000 | 233400 |
| Նուբարաշեն | 150300 | 145800 | 150100 |
| Միջինը Երեւանում (բացի Նոր Նորքից) | 286400 | 274100 | 273000 |

Բնակարանների շուկայական միջին գները Երեւանում այս տարվա հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ գրեթե անփոփոխ են մնացել (աճել են 0,1 տոկոսով): Ըստ վարչական շրջանների, Երեւանում բնակարանների 1 քմ մակերեսի միջին շուկայական գները այսպիսին են եղել.

Մարզերում, բացառությամբ Երեւանի, հոկտեմբերին վաճառվել են 368 բնակարաններ, որոնց քանակը սեպտեմբերի համեմատ նվազել է 11,3 տոկոսով, իսկ 2010-ի հոկտեմբերի համեմատ՝ 4,9 տոկոսով: Բնակարանների միջին գները մարզերում հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ անփոփոխ են մնացել:

Երեւանից հետո, ամենաթանկ բնակարանները հոկտեմբերին եղել են Ծաղկաձորում, որտեղ 1 քմ մակերեսի շուկայական գինը կազմել է ավելի քան 201 հազար դրամ: Աբովյանում 1 քմ գինը 143 հազար դրամ է կազմել, Վաղարշապատում (Էջմիածնում)՝ 141 հազար դրամ: Ապա գալիս են Նոր Հաճընը՝ 126 հազար դրամ, Աշտարակը՝ 125 հազար դրամ, Իջեւանը 119 հազար դրամ, Գորիսը՝ 118 հազար դրամ, Ջերմուկը՝ 114 հազար դրամ, Արմավիրը՝ 112 հազար դրամ, Եղեգնաձորը՝ 110 հազար դրամ, Մասիսը 107 հազար դրամ 1 քմ-ի դիմաց ցուցանիշներով:

2011-ի հոկտեմբերին Հայաստանում գրանցվել է անհատական տների առուվաճառքի 475 գործարք, որից 109՝ Երեւանում: Մայրաքաղաքում անհատական տների առուվաճառքի գործարքների քանակը 2011-ի հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ նվազել է 18,7 տոկոսով, իսկ մարզերում աճել՝ 2,5 տոկոսով: 2010-ի հոկտեմբերի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը Երեւանում նվազել է 0,9 տոկոսով, իսկ մարզերում միասին վերցրած աճել՝ 16,2 տոկոսով: Միջինացված՝ 250 քմ շինության մակերես եւ 400 քմ տնամերձ ունեցող անհատական տների 1 քմ-ի միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը) 2011-ի հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ աճել են 0,4 տոկոսով: Ըստ Երեւանի վարչական շրջանների, գներն այսպիսին են եղել.

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|
| | հոկտեմբեր 2010թ. | հոկտեմբեր 2011թ. | սեպտեմբեր 2011թ. |
| Կենտրոն | 447600 | 436100 | 436200 |
| Արաբկիր | 366100 | 342000 | 337900 |
| Քանաքեռ-Զեյթուն | 278800 | 265900 | 265600 |
| Նոր Նորք | 229000 | 227700 | 222100 |
| Ավան | 237900 | 248900 | 250500 |
| Էրեբունի | 244200 | 226700 | 232100 |
| Շենգավիթ | 242400 | 233400 | 228900 |
| Դավթաշեն | 268200 | 253000 | 256300 |
| Աջափնյակ | 229200 | 226500 | 222800 |
| Մալաթիա-Սեբաստիա | 232300 | 223100 | 224500 |
| Նուբարաշեն | 149000 | 140100 | 144200 |
| Միջինը Երեւանում (բացի Նորք-Մարաշից) | 265900 | 256700 | 256500 |

Մարզերում միջինացված են 200 քմ շինության եւ 1000 քմ տնամերձ մակերեսով անհատական տների գները: Այստեղ միջին գները հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ աճել են 0,2 տոկոսով: Ամենաթանկ անհատական տները Երեւանից հետո դարձյալ Ծաղկաձորում են՝ 1 քմ-ն՝ 309 հազար դրամ: Երկրորդը Վաղարշապատն է՝ 1 քմ-ն՝ 168 հազար դրամ, երրորդը՝ Աբովյանը, որտեղ 1 քմ-ն կազմել է 150 հազար դրամ: Ապա գալիս են Նոր Հաճընը՝ 132 հազար դրամ, Աշտարակը՝ 130 հազար դրամ, Իջեւանը՝ 129 հազար դրամ, Գորիսը՝ 126 հազար դրամ, Գյումրին՝ 119 հազար դրամ 1 քմ-ի դիմաց:

Հողի շուկայում հետեւյալ պատկերն է՝ 2011-ի հոկտեմբերին 2010-ի հոկտեմբերի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 3,1 տոկոսով, աճուրդով վաճառքներինը աճել՝ 26,9 տոկոսով:

2011-ի հոկտեմբերին 2011-ի սեպտեմբերի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 12,9 տոկոսով, իսկ 2010-ի հոկտեմբերի համեմատ նվազել՝ 14,9 տոկոսով:

Իրականացվել են հիփոթեքային գրավադրման 209 գործարքներ, որից 153-ը՝ Երեւանում: Հիփոթեքային գրավադրման գործարքներից 81,3 տոկոսն իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 14,4 տոկոսը՝ անհատական բնակելի տների, մնացածը հասարակական նշանակության օբյեկտների, այգետնակների եւ հողերի նկատմամբ: 2011-ի սեպտեմբերի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 3,5 տոկոսով, ընդ որում, Երեւանում՝ 6,3 տոկոսով, իսկ մարզերում նվազել՝ 3,4 տոկոսով: 2010-ի հոկտեմբերի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 52,6 տոկոսով, ընդ որում, Երեւանում՝ 56,1 տոկոսով, իսկ մարզերում՝ 43,6 տոկոսով:

Այսպիսով, Հայաստանի անշարժ գույքի գները հոկտեմբերին հիմնականում մնացել են անփոփոխ, իսկ գործարքների քանակը՝ նվազել: Չնայած տնտեսական ակտիվության շրջանին, անշարժ գույքի շուկան դեռ աշխուժանալու նշաններ ցույց չի տալիս:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Տասնամյա կուսակցության նոր մոդելը

Սույն թվականի դեկտեմբերի 3-ին՝ ժամը 13.00-ին, ՀՀ կառավարության նիստերի մեծ դահլիճում (մուտքը՝ Մելիք Ադամյան փողոցից) տեղի կունենա Հայաստանի ժողովրդավարական ազատական միություն (ՀԺԱՄ) կուսակցության 10-ամյակին նվիրված համաժողով: Համաժողովի ընթացքում կներկայացվեն ՀԺԱՄ կուսակցության ծրագրերը առաջիկա խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ: Կներկայացվի ՀԺԱՄ կուսակցության կողմից առաջ քաշված ՀՀ հասարակական-քաղաքական կյանքի նոր մոդելը, ինչպես նաեւ կամփոփվի կուսակցության առաջին 10 տարիների գործունեությունը: Կտրվեն քաղաքական գնահատականներ ՀՀ իշխանությունների գործունեության վերաբերյալ:

Համաժողովին մասնակցելու են մի շարք կուսակցությունների ղեկավարներ, պետական եւ քաղաքական գործիչներ, ինչպես նաեւ ՀԺԱՄ կուսակցության նոր ծրագրերով հետաքրքրված այլ անձինք:

ՀԺԱՄ կուսակցության
հասարակայնության հետ կապերի բաժին

ԱՌՃԱԿԱՏՈՒՄ

# «Թույլ չենք տա, որ քարտեզից ջնջեն Քաջարան գյուղը»

## *Գյուղացիներն ընդդեմ կառավարության եւ հսկայական կոմբինատի*

Այս տարի ապրիլին կառավարությունը որոշում կայացրեց, համաձայն որի Քաջարան գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 181.7 հա հողից 27 հա-ն ճանաչվեց բացառիկ գերակա շահ: Կառավարությունն այդ տարածքը փոխանցեց «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ին՝ հետագա արդյունահանման նպատակով: Համաձայն պաշտոնական հայտարարության՝ «ԶՊՄԿ»-ի գլխավոր սեփականատերն է գերմանական Cronimen Mining ընկերությունը, որին է պատկանում կազմակերպության 60 տոկոս բաժնեմասը: Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրն ամենահարուստներից է: Կոմբինատը տարեկան արդյունահանում է 16-17 մլն տոննա հանքանյութ: Նոր հողեր վերցնելով կոմբինատը ցանկանում է կրկնապատկել հանքաքարի ծավալները: Անցյալ տարի ընկերության եկամուտը կազմել է 21.5 միլիարդ դրամ:

Քաջարան գյուղում այսօր ապրում է 131 ընտանիք՝ 250 բնակիչ: Թեպետ գյուղը շատ մոտ է հանքավայրին, սակայն նրա տարածքը ի տարբերություն այլ գյուղերի, համարվում է մաքուր: Գյուղը բարձրադիր վայրում է տեղակայված եւ կոմբինատի հանքարդյունաբերական թափոնները չեն կեղտոտել գյուղի տարածքը: Սահմանամերձ գոտում բնակվող քաջարանցիների հիմնական զբաղմունքը հողագործությունն ու անասնապահությունն է: Քաջարան գյուղի բնակիչները գարնանից պայքարում են բնակավայրի փրկության համար: Քաջարանցիները չեն ցանկանում, որ տարածքը, որն ընդգրկում է նաեւ գյուղի գերեզմանոցը, դառնա հանքարդյունաբերական կենտրոն: Քաջարանի գյուղապետ Ռաֆիկ Աթայանը «Ազգ»-ի հետ զրույցում պատմում է, որ գյուղի բնակիչները մի քանի անգամ կանգնեցրել են գյուղ մտած տեխնիկան եւ կասեցրել աշխատանքները, սակայն օրենքն իրենց կողմից չի խոսում: «Գյուղի բոլոր բնակիչներն էլ դեմ են, որ իրենց այգիները ծանր մետաղներով կեղտոտվեն: Մենք ուզում ենք հանգիստ ապրենք: Չենք ուզում, որ մեր արոտավայրերը հանքարդյունաբերական թափոններով աղտոտվեն»:

Կառավարությունը որոշում կայացնելիս նշել էր , որ «ծրագիրն ընդերքօգտագործման բնագավառում ունի համապետական կարեւոր նշանակություն, դրա իրականացումը կապահովի հանրապետությունում արդյունաբերական արտադրանքի եւ արտահանման ծավալների էական աճ եւ մեծապես կնպաստի երկրի տնտեսական անվտանգության ամրապնդմանը»: Գյուղապետը խոստովանում է, որ կառավարության որոշման մասին իմացել է պատահական: Սկզբում չի հավատացել, հետո փաստաթղթեր են ցույց տվել: Քաջարանցիները դժգոհում են, որ պետությունն առանց իրենց կարծիքը հարցնելու իրենց բնակավայրից մի հատված տրամադրել է մասնավոր կազմակերպության: «Իշխանությունները գյուղի արհեստական տեղահանման ծրագիր են մշակել, բայց մենք թույլ չենք տա այն իրականացնել: Ի՞նչ պետք է անենք, ո՞ւր պետք է գնանք: Մենք ոչ մի տեղ էլ չենք ուզում գնալ, ուզում ենք ապրել մեր հողում, մեր տանն ու մեր այգիները մշակել: Իշխանությունները ցանկանում են այդ կերպ քարտեզից ջնջել Քաջարան գյուղը, բայց մենք միասնական ենք ու թույլ չենք տա մեր հողը զավթել», ասում է գյուղապետը:

Քաջարանցիները բազմաթիվ նամակներ են ուղարկել ՀՀ նախագահին, վարչապետին, ԱԺ նախագահին, սակայն պատասխան մինչ օրս չեն ստացել:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## Հայտարարություն

«Ազգ» թիվ 190 (4808) թերթում 2011 թ. հոկտեմբերի 25-ին «Հայինկասացիա» ՓԲԸ կողմից թվով մինչեւ 6 հատ՝ «B3+» ռուսական, «B4+» եվրոպական պաշտպանության ինկասացիոն զրահապատ տրանսպորտային միջոցների ձեռքբերման նպատակով կազմակերպություն ընտրելու համար տրված հայտարարության փոփոխություն.

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2011 թ. դեկտեմբերի 6-ին, ժամը 15.00-ին՝ ՀՀ կենտրոնական բանկ, ք. Երեւան, Վ. Սարգսյան 6 հասցեում:

Մրցույթին մասնակցելու հրապարակային ծանուցման մեջ փոփոխությունը հրապարակված է www.cba.am ինտերնետային կայքում: Մրցույթին մասնակցելու հրապարակային ծանուցումը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել «Հայինկասացիա» ՓԲԸ, գործերի կառավարչություն հեռ. 28-15-00, 20-14-26, 28-51-03:

**Վաճառվում է Daewoo Matiz Best**
մակնիշի ավտոմեքենա 2008 թ., շարժիչը 1լ, վազքը՝ 4 300 կմ, արծաթագույն, ունի կոնդիցիոներ, հայելիները եւ ապակիները էլեկտր. (full), գործարանային վիճակ:
**Հեռ.՝ (091) 32-88-89**

կօգնի դիմանալ ամառվա տապին
Սարերի գարունը մեկ գավաթի մեջ
ՍԱՐԻ ԹԵՅ
ՈՒՐՑԻ ԵՎ ԴԱՂՁԻ ԸՆՏԻՐ ԹԵՅ
25 փաթեթ մեկ տուփի մեջ
եւ ընդամենը 1-2 րոպեից կարող եք
վայելել ընտիր որակի ուրցի թեյ
MOUNTAIN TEA ՍԱՐԻ ԹԵՅ
առնվազն ամիսը մեկ արժե ընտրել բարձրորակը
Մեծածախ գնումների համար զանգահարել 47-27-20, 47-03-63

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 1.12.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: